



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՏՆՏԵՍՆԿԱՆ : Գործակցութիւն եւ Գործակից Ընկ.....Բ. Ք.
 ԸՆԿԵՐԱԿԱՆ ԽՆԴԻՆՆԵՐ : Կանանց դերը ընկերութեան.....Տ. ԵՌԱՆՈՒՅԵԱՆ
 ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ : Տիկին Ժօրժ Սանտ.....
 ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՅ : Թուանշանք.....Ս. Տ.
 ՎԻՊԻԿԱՆ : Մատենի մեղքը (ԲՈՒ ԱԼՊԱՆ) Թարգմանութիւն.....
 ՔԱՂԱՔԱՆ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ : Արտաքին, Ներքին, Ազգային.....
 ՎԵՊ : Սիմոն եւ Մարի (Կապիտէ ալ Մօնթէրէն) Թարգմ.....Մ. Զ. ՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. Պոլիս եւ գաւառներու — տարեկան.....Կէս ոսկի Օսման.
 Վեցամսեայ.....Բառ » »
 Մէկ Թերթին գինն է60 փարայ
 Օտար քաղաքացի համար տարեկան.....12 ֆրանք
 Վեցամսեայ.....6 »
 Թղթատարութեան ծախք տարեկան.....Դան. արծ. 15
 Վեցամսեայ.....» » 7 1/2

Մասիսի խմբագրութեան հոդոյեալ ո՛ր եւ է գրութիւն կամ նամակ պէտք է
 ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս լրագրաց
 Ղալաթիա, Հորատունկեան Խան

Կ. ՊՂԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 24 Օգոստոս

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս Լոնտրայի վրայ (պանդայի)	110 1/8
3 » » » (վճռակն)	109 3/4
3 » Բարիդի » (պանդայի)	22 95
3 » » » (վճռակն)	23 02 1/2

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Օսմանեան Գոնսոլիտե

Երեկ երեկոյ գոցուեցաւ	ԳՆԿՆ	9
Պորային գոցուեցէն վերջը	» ...	9
Ելսոր Բերայի մէջ	» ...	9
Առաւօտուն բացուեցաւ	» ...	9
Բարձրագոյն գին	» ...	9
Նուազագոյն	» ...	9
Կէս օրին	» ...	9
Իւնիֆիէ Եգիպտական		66 30
Երեկ իրիկուն գոցուեցաւ		66 26
Բերայի մէջ		66 15
Այս առտու բացուեցաւ		66 15
Կէս օրին		66 15
Փոխառութիւն 1863.....	Փր. ...	60
» 1865	» ...	52
» 1869	» ...	46
» 1873	» ...	42
Պոն տիւ Թրեզոր	Անգլ. Լր. ...	18 75
Բոսնիէի երկաթուղի	Փր. ...	44 25
Օպիկասիոն տը Բրիտիթէ	»	373
Բաժնեթուղթ Լաւրիսի	»	82

ԲԱԺՆԵՏՈՒՄՔ

Սօսիթէ Ժէնէրալ	Անգլ. Լր.	3 28
Գրէտի Ժէնէրալ (Գ. Կ.) ...	Օսմ. Լր.	6 25
Պանէ տը Գոնս	»	5 30
Սօս. Շանթ է վալէօր	Օսմ. Լր.	3 27
Թրամուէյ	»	295

ԸՆԲԱՅՔ ՂՐԱՄԱՆ

Օսմանեան ոսկի	Ղր.	100
20 Ֆրանկոն	»	87 26
Անգլիական ոսկի	»	110 7
Բօլ Իմպերիալ	»	90
Գրիմից	»	51 15
Ռուսկի Թղթադրամ	»	9
» արծաթ	»	89 30
Ֆիորին	»	9 2
Մէճ. արծ. (տարբ.)	»	108 1
Վէնոն	»	102 35
Հինգոն	»	102 30
Մէթալիք	»	98
Պղինձ	»	800
Թղթադրամ	»	3000

ԵՐԴՐԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 4 Սեպտեմբեր ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. Ժոնսոյի գոցուեցաւ	100 7/8
Օսմ. բացուեցաւ	8 1/4
» գոցուեցաւ	8 1/8
Օսմ. փոխառութիւն 1865	10 1/2
» 1869	9 1/2
» 1871	66
» 1872	48
» 1873	8 1/4
Փոխառութիւն 1877	78
Պան. Օթօման	12 7/8
Ռուսական փոխառ. 73 (գ. Կ.)	92 1/2
Եգիպտ. 3 կան միացեալ (իւնիֆիէ)	59 3/4
» առանձն. (բրիտիլէթիէ)	82 7/8
Տայրա Սանիէ	58 1/4
Տօմանիալ (փոխառ. Բօչիլտ)	81
Հոնգարական պարտութուղթ 1877	102
Փոխանակութիւն Բարիդի վրայ	—

Վիէննա, 4 Սեպտեմբեր ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	121 75
Օսմանեան երկաթուղի	21 40
Բարիդ, 4 Սեպտ. ժամ 3 վայր. 65 երեկոյ	
Ֆրանսական Ռանթ 4 1/2 օլո. բաց	108 10
» 3 օլո. բաց	78 45
Օսմանեան Ժոնսոյի բանուեցաւ	8 25
» գոցու. (գ. Կ.)	8 25
Օսմանեան փոխառութիւն 1863	—
» 1865	—
» 1869	46
» 1873	41
Օսմանեան երկաթուղի	43 75
» Իէթի բաժնեթուղթ	517 50
Պան. Օթօման իջած	575
Գրէտի Լիօն	561 25
» Ֆիօնիէ	1393 75
Բաժնետոմս Լիօնի (գուբ. կոր.)	1240
Սուէզի ջրանցք	1905
Ռուսական 5 օլո 1877ի	97 1/2
Իտալական Ռանթ (բարձրացած)	95 66 1/4
Արեւելեան Ռուս. (Ռուս. Օրիան.)	—
Եգիպտական միացեալ գոց	301 25
Սպանիական (արտադր.)	59 3/8
Բրիտիլէթ Թիւրք	372 50
5 օլո Հիլլեական	355
Չէք Լոնտրայի վրայ	25 18

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ

Նուպարեան թարգմանութեան

Վիկտոր Հիւկոյի Նօթք-Տափին

Գրեց — Նորայր Ն. Իւզանդացի

Կը ծախուի Ֆինանսըլար եօգուշու Ամերիկեան գրատուն :

Գին 100 փարա արծաթ

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՔԱԿԱՆ

33 ԴԻ ՏԱՐԻ

1884 ՕԳՈՍՏՈՍ 25

ԹԻԻ 3732

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԳՈՐԾԱԿԻՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ

Կ. Պոլսոյ մէջ, ի Ղալաթիա, առաջին անգամ Անգլիացւոց ունանց Գործակից ընկերութիւն մը (Անգլիէ Գո-Օքթերթիլ) հաստատելը մեզ առիթ կուտայ խօսելու տնտեսական գիտութեան յոյժ գործնական, օգտակար և դիւրամիտ մէկ կիրառութեան վրայ: Տնտեսական խնդրոց վրայ Մաթիա շաբաթաթերթին մէջ արդարեւ պիտի խօսուի. բայց ո՛չ թէ դասական, վարդապետական ոճով, կամ դասադրքի ձեւով: Տնտեսագիտութեան մեր երկրին անմիջական կերպիւ օգտակար կիրառութիւնը մերթընդ մերթ մասնաւոր յօդուածներով պիտի բացատրուին դիւրահասկնալի լեզուաւ:

Երբ խանութ մը բան գնենք, գիտենք թէ վճարուած գինը կը բաղկանայ քանի մը մասերէ: Մի մասը գնուած նիւթին իսկ արտադրութեան գինն է: Ուրիշ մաս մը արտադրողէն առաջին անգամ գնող մեծ վաճառականին շահն է: Երրորդ մաս մը կը ներկայացնէ շահն երկրորդ վաճառականին, որ Կ. Պոլիս բերել և մթերել կուտայ զայն: Այս երկրորդ միջնորդ արտադրութեան գնոյն վրայ կը բարդէ այն չափ զոր առաջին միջնորդին վճարեց, նաեւ փոխադրութեան ծախքը մինչեւ Կ. Պոլիս, մաքան, և ի վերջոյ իւր շահ: Մեր խանութպան Պոլսեբնակ վաճառականէն գնելով և մեզ ծախելով, ինք եւս շահ մը հարկաւ կը բարդէ գնոյն վրայ: Գիտենք ուրեմն թէ, ինչ որ

ինչ գնով ալ գնենք, շատ սուղ կը գնենք միշտ՝ Գնորդներու շահախնայ պատճառաւ:

Արդ, կարելի չէ՞ միթէ որ գնողները, կամ՝ գիտական բառով՝ սպառիչներ իրենք վաստկին այս անվերջանալի միջնորդ շէքներ, և կամ՝ որ նոյն բանն է՝ առաւել ածան գնեն իրենց հարկաւոր ուտելիքն, ըմպելիքն, զգեստները, կահ կարասիքն, եւայլն:

Այս հարցման պատասխանն իբր 40 տարիէ հետէ տրուած է Եւրոպոյ մէջ: Այդպիսի հաշիւ մ'ընողներ ի սկզբան խոնարհագոյն դասերն եղան ի հարկէ, մանաւանդ գործաւորները: Սոցա վաստակը սահմանափակ է միշտ, և բնական է որ խորհին ըստ կարի շատ պիտոյք գոհացնել քիչ վաստակով: Ասոր միջոցը գտան Գոթալի-ցախեան մէջ: — Մէկ մէկ փոքր գումար կը գնեն, շաբաթական 40 փարայէն սկսեալ մինչեւ մէկ ոսկի՝ մէկ անգամէն վճարուած (!): Այսպէս կը գոյացնեն դրամագլուխ մը: Այս դրամագլխով մեծ վաճառականէն կը գնեն ամենօրեայ կենաց անհրաժեշտ պիտոյք, զորս կը մթերեն յատուկ խանութի մը մէջ որպէս հասարակ խանութպան մը: Այս խանութէ կը հայթայթեն իրենց պէտքեր: Բաժանորդական խանութը բնականապէս նոյն չափը կ'ընէ ինչ որ կ'ընեն ուրիշ խանութներ, որք երկրորդական և երրորդական միջնորդներ են մեր պիտոյից հայթայթման: Գոյացեալ շահը պարբերապէս կը բաժնուի բաժանորդ-

() Ղալաթիոյ « Գործակցական Թերանոց » ին բաժինն է 5 ոսկի. որովհետեւ բոլորովին գործաւորական հաստատութիւն մը չէ այս. բայց ինչպէս քիչ մը վարը կը տեսնենք, բաժնին քանակութիւնն ազդեցութիւն չունի գործին վերջնական յաջողութեան վրայ, որ տարբեր պայմաններ կ'ախուժ ունի:

դաց՝ նոցա բաժնից ու գնմանց համեմատութեամբ : Արդիւնքն ի՞նչ կը լինի : — Ամեն բաժանորդ դիմեց ի՛նչ խանութէն գնելով, նախ և առաջ ապահով է թէ պակաս կամ գէշ ապրանք չառնուր : Եւ ապա, եթէ նոյն գինն ալ վճարէ այս խանութի դր ինչ այլուր պիտի վճարէր, քանի որ գոյացեալ չափն բաժին ունի, չատմածեւ հարկաւոր չէ հասկնալու հոմար թէ, ամեն ինչ կը գնէ մեծ քանակութեամբ վաճառման գնով, այսինքն՝ առանց չափ մը տալու երկրորդական ու երրորդական միջնորդներու : Շահէն մաս մը, կամ ամբողջը, նախական դրամադրին վրայ բարդ ունելով, խանութը կը մեծնայ, ուրիշ ապրանք եւս կը վաճառէ, մինչեւ որ բաժանորդը իրենց ամեն պիտոյք կարենան հոգալ իրենց խանութէ, ամեն ինչ թէ՛ լաւ տեսակէն, թէ՛ ծիշդ չափով և թէ՛ ածան գնելու ապահովութեամբ :

Ասոր կըսեն՝ գործակցութիւն պիտոյից քաջման մէջ միայն : Բայց միթէ բաժանորդական խանութէն գնուած նիւթերն ընդհանրապէս բաժանորդական ձեւով արտադրել կարելի չէ : Եթէ միջնորդ վաճառականներն ու խանութպաններն իրենց ծախած վաճառաց վրայ չահեր կ'ընեն, միթէ նոյն վաճառաց արտադրիչներն ալ չահեր չ'ըննր : Եւ եթէ գործակցութեամբ կարելի է սպասողներուն սեփականել բաշխման միջնորդներուն չահերը, նոյն միջոցաւ կարելի չէ՞ սպասողաց սեփականել նաեւ արտադրիչներուն չահն :

Այս հարցմանց պատասխաններն հաստատական են կատարելապէս : Ի սկզբան լոկ բաշխման նպատակաւ կազմեալ գործակցութիւններ յետոյ արտադրիչ ընկերակցութիւններ եղած են միանգամայն : Օրինակի համար, եթէ ի սկզբան պատրաստ լաթեր գլխաւոր մթերանոցէ մը գնելով կը վաճառէին իրենց ընկերաց, յետոյ բռն լակ կերպաշ բերել տալով իրենց զոհող կարել տուած են գերծակի խանութի մը մէջ, որ առջի միակ խանութին վրայ աւելցած էր, և այսպէս ուրիշ պիտոյից համար ալ :

Գործակցութեան գաղափարին այս վերջին եղանակաւ կրած ընդ լայնումը նշանաւոր առաջդիմութիւն մ'է ինքնին, ո՛չ միայն սնվողովն չահուն տեսակետով, այլ

նաեւ արտադրիչ, արհեստաւոր կամ գործաւոր դասուց շահուն տեսակետով : Գործակցական արտադրութեան մէջ, գործաւորը միանգամայն գործատէր են : Գործաւորը կը կազմեն բաժնի վրայ դրամադրութեմը, որով ձեռք կը բերեն արտադրութեան պէտք եղած նիւթերն ու գործիքն : Իրենց մէջէ, կամ դրսէն, ճարտարագոյնը կը կոչուին խանութիւն գործին, միւսներէն աւելի բարձր թոշակով մը : Ամենքը կ'աշխատին հաւասար եռանդեամբ, զի ամբողջ չահն իրենց է, պարբերապէս բաժանելի ըստ քանակութեան թոշակաց : Թոշակներն ու չահերը կախում ունին ամբողջ գործին յաջողութենէն : Կերեւակայուի անշուշտ թէ այսպիսի պայմանաց մէջ գործաւորը ու արհեստաւորը ո՛րչափ լաւ կ'աշխատին, հաւատքով և եռանդեամբ ո՛րպիսի հրաշալիք կը գործեն արտադրութեան անսահման աւանդդին մէջ : Դրամադրիչ և Աշխատանքեան, կամ դրամատէրաց ու գործաւորաց անվերջանալի հակառակութեան բարձունքիս, որ այս կերպ արտադրութեան բնական հետեւանքը կը լինի, առանձին հրաշալիք մը չէ՞ միթէ ինքնին : Ընկերացողը լրացրաց մէջ ամեն օր կը կարդան Ընկերակցականաց, Հասարակորդի անդամոց, Անխիլանականաց վրայ, եւ այլն : Բայց բոլոր վէճը Դրամադրչութեան Աշխատութեան հետ հաշտեցնելու պայմաններուն վրայ է : Այս պայմանաց վրայ եթէ ընկերութիւնն իւր արդիւն կազմակերպութեան մէջ չէ կրցած դեռ համաձայնիլ յեղափոխական տարերաց հետ, պէտք է դիտեալ թէ այդ տարերք ալ իրենց մէջ համաձայնած չեն բոլորովին : Թէ արդեօք դրամատէր գնատերն օր մը լիովին պիտի համաձայնի՞ն գործաւոր դասուց հետ, և ի՞նչ պայմաններով, յանդգնութիւն կը լինի դուշալիլ միորձեւ օյժմէն : Բայց տարալոյս չենք կրնար ունենալ թէ, համերաշխութիւն մը եթէ երբեք պիտի գոյանայ ընդ մէջ այդ երկու ընդդիմամարտ տարերաց, քաջակցութեան հիման վրայ պիտի գոյանայ : Գործաւորները դրամատէր պիտի լինին : Հողագործներն ալ հողատէր պիտի լինին : Յայնժամ ո՛չ ոք ուրիշ մը բացարձակ շահուն համար պիտի աշխատի չարաչար : և հետեւեալ պէս, յայնժամ ո՛չ ոք իրաւունք պիտի ունենայ գանդատելու թէ կ'աշխատի Բրուսելոյ

Թագաւորին համար : Ուրիշի մը հողին վրայ բանող հողագործը միայնորդ մ'է՝ աւատաւորեական միջնադարեան ժամանակաց : Ուրիշի մը դործարանէն մէջ բանող դործաւորն ալ նախկին ստրուկներու նորագոյն ձեւն է միայն : Եթէ տնտեսագիտութիւնն և այժմեան քաղաքականութիւնը միարանած են հողագործներն ըստ կարելոյն հողատէր ընելու պէտքն վրայ, զոր նոյն ինքն Անգլիա կ'աշխատի իրականացնել Իսլանտայի մէջ, պտտնաւ մը չկայ որ անոնք օր մը չմիաբանին դործաւոր դասերը միանալուան դրամատէր ընելու մասին : Ասով հողագործն ուղղակի շահ կ'ունենայ լաւ մը շահելու իւր հող, և դործաւորն՝ եռանդով ու գոհ սրտով արտադրելու : — Այս դադարներ կիրառութեան ճամբուն մէջ մեծ առաջընթացներ ըրած են արդէն, մանաւանդ յԱրեւմտեան Եւրոպայ և ի Միացեալ-Նահանգս : Յիշենք քանի մը երեւելի օրինակներ :

*
* *

1844ին Անգլիոյ Ռոչտէյլ փոքր քաղաքին մէջ 30ի չափ դործաւորներ 28 ոսկւոյ դրամագլուխ մը կ'աղմեցին, չարախերկերկու բէնս (36 փարայ) բաժանորդաւորն վճարելով, զոր ապա 3 բէնսի հանեցին : Այս գումարով փոքր խանութ մը բացին, ուստից կը գնէին իրենց ընտանեաց ամանօրեայ պիտոյքը : Ենթահի իրենց ճըղապահութեան, պարկեշտութեան և մաքրութեան, բաժանորդներէն զատ նոր յաճախորդներ ու բաժանորդներ եւս ստացան : Այսպէս կրցան տակաւ ընդարձակել խանութը՝ նոր ապրանք գնելով, և մի քանի տարի յետոյ բաժանորդական ջաղացքի մը տէր եղան : 15 տարիէն, 1857ին, Ռոչտէյլ այս դործաւորք փոքր խանութին տեղ ունեցան մեծ վաճառատուն մը սաեօթն ճիւղերով. Նալարավաճառ, Կերպասավաճառ, Մսավաճառ, Կոշիկաւոր, Դերձակ և Փեղուրադործ : Եթեներորդ վաճառատունն էր կեդրոնական մթերանոց մը, ուր ամեն տեսակ նիւթ կը ծախուէր մեծ քանակութեամբ : Մէն մի ճիւղ զատ համարակալութիւն ունէր : Ամեն եռամսէին ընդհանուր հաշիւ մը կը շինուէր, բոլորին վճակը ցուցնող : Նալարավաճառի խանութն ամենէն

տուժ հաստատեցաւ 1844ին, երբ միայն չորս տեսակ ապրանք կը սլարունակէր. բըրինձ, կարապ, մաքարոնիա և չոր ձուկ. իսկ 1857ին կը ծախուէր ամեն ինչ զոր կը պարունակէ նալարավաճառանոց մը : Միւս ճիւղերն ալ և ալ թուականներով սկսան, և տարուէ տարի ճոխացան : Կեդրոնական Մթերանոցէն Ռոչտէյլի այս Ռաշֆլայթ մեծ քանակութեամբ վաճառք սկսան ծախել ուրիշ նմանօրինակ ընկերութեանց, որք իրենց օրինակէն քաջալերեալ դործակցական խանութներ բացեր էին փոքր դրամագլուխներով : Ռոչտէյլի Ռաշֆլայթ կը վաճառէին ամեն բանին աղէկը, ճիշդ չափով, օրինաւոր գնով, բայց անյեղի սկզբունքով մը, — ճշգրիտ :

Ռոչտէյլից, որք 1844ին 28 անդամով և 28 ոսկւով գործի սկսած էին, 1854ին ունէին 900 անդամ, 7,172 ոսկի, տարին 55,364 ոսկւոյ առեւտուր և 1,765 ոսկւոյ շահ ըրած էին : 1864ին ունէին 1,580 անդամ, 60,000 ոսկւոյ չափ դրամագլուխ, և 5,715 ոսկւոյ տարեկան շահ : Վերջապէս, 1878ին, ունէին 10,187 անդամ, 500,000 ոսկւոյ մօտ դրամագլուխ, աւելի քան 80,000 ոսկւոյ տարեկան շահով : Տարեկան շահը կը բաժնուէր ընկերաց դրած բաժնիներուն և տարւոյն ընթացքին մէջ ըրած գնումներուն համեմատ. ոչ-ընկերաց ալ 1 անգլիական ոսկւոյ փոխարէն 1 շիլլին և 8 բէնս պարգեւ կը տրուէր իրենց գնմանց վրայ : Եահուն մէկ մասը պահեստի գումարին կը յատկացուէր, որ նմանապէս կ'աճէր տարուէ տարի, և վերջապէս, չորրորդ մաս մը կը յատկացուէր անդամոց կրթութեան. որովհետեւ ընկերութիւնն ունէր պատուական դրատուն մը, ամեն տեսակ գիրքերով ու լրագրերով, գիշերային և կիրակնօրեայ դասարաններ ու լսարաններ, և ալ միջոցներ մտային ու բարոյական կրթութեան իւր անդամոց :

Ռոչտէյլի այս հանճարեղ դործաւորք կոչուեցան Ռաշֆլայթ. զի նմանօրինակ ձեռնարկութեանց ճամբան բացին Անգլիոյ մէջ : Անցեալ յունիս ամսոյ մէջ ի Վոնտոն տեղի ունեցաւ Անգլիոյ Գործակից ընկերութեանց տարեկան Ընդհանուր Ժողովն, որոյ ատենադուր իւրենք մեզ բերն անգլիական լրագիրք : 16 տարիէ հետէ Անգլիոյ Գոր-

ծակից ընկերութիւնը ունին այսպիսի տարեկան ժողով մը, յորում ամեն քաղաքի ընկերութեան կողմէ պատուիրակ մը ներկայ կը գտնուի, և իրենց արդէն կատարած առաջդիմութեան և աւելի առաջ երթալու համար պէտք եղած միջոցներուն վրայ կը խօսին: Հումուտանտեսագէտներ ու քաղաքագէտներ այս առթիւ կը փութան իրենց լոյսերէ ու փորձառութիւններէ բաժին հանել այս համակրելի գործաւորաց: Բայց հիմա միայն գործաւորները չեն անդամը սոյնպիսի կազմակերպութեանց: Միջին և բարձր դասուց անդամը շահաւոր դաժն են իրենց ընտանեաց պիտոյքն հոգալ Գործակցական Միութեանոցներէն, որոց կառքերը՝ զանազան վաճառքով ի՞նչ ստէպ կը տեսնուին Լոնտոնի ամենէն աղքատական թաղերուն մէջ իսկ: Գործակից ընկերութեանց Ազգայնական ժողովոյն տարեկան տեղեկագրէն կ'իմանանք թէ, ի վերջ 1882 տարւոյ, բոլոր Անգլիոյ, Սիւլտիոյ և Իռլանտայի մէջ, Ռոչտէյի օրինակին համեմատ կազմեալ Գործակից ընկերութեանց թիւն է 1,546, որք ունին 161,317 անդամ. նոյն տարւոյ մէջ ծախած են 26,616,001 ոսկւոյ վաճառք, և շահած են 2,112,545 ոսկի. բաժանորդական դրամագլուխն է 7,452,389 ոսկի, փոխառութեամբ գոյացած դրամագլուխ՝ 1,593,003 ոսկի. վաճառականութենէ դուրս ունին գոյք և ըստացուածք 4,267,889 ոսկւոյ, որոցմէ նոյն տարին շահած են 131,191 ոսկի, և վերջապէս, նոյն տարին կրթական նպատակացատկացուցած են 14,750 ոսկի: Լանքաշիրի և Նորթլիթի գաւառաց 70 մեծ Գործակից ընկերութիւնք տուած են իրենց 1883 տարւոյ հաշիւն եւս, յորում կը տեսնենք թէ ունին 248,024 անդամ, 1883 ին ծախած են 12,886,236 ոսկւոյ ապրանք, շահելով 917,107 ոսկի: Այս ընկերութեանց յառաջդիմութեան մեծապէս նպաստած լինելով երեւելի իրաւագէտ և փաստաբան մը, Պ. Թոմաս Հիւկս, ընկերութեանց Բնդհանուր Ժողովն 1,700 ոսկի յատկացուց, որոյ տոկոսիւք յանուն Պ. Հիւկսի մնայուն կերպիւ աշակերտ մը պիտի սրահուի Օքսֆորտի Համալսարանին մէջ:

Այլ առաջ լռարար: Այս անգամ Ֆրանսայէն օրինակ մը պիտի տանք: 1848 ին Ֆրանսայի աշխատաւոր դասուց մէջ ընդհանուր զարթոնութիւն մը տեսնուեցաւ: Մինչեւ ցայն վայր դրամատեսարց լուծն ստրկորէն կրած այս տգէտ ու տկար դասեր սկըսան խորհիլ իրենց վիճակի և իրենց ապագայի վրայ: Մտածեցին թէ չէին կրնար տէր լինել իրենց ճակատագրոյ: Բարեբախտապէս, նոյն միջոցին կազմուեցաւ Համալսարանական կառավարութիւն մը, որ լուտրամադրութիւններ ունէր գործաւոր դասուց նկատմամբ: Կ'ուզէր հիմնովին բարենորոգել նոցա վիճակը: Կազմուեցան «Արտադրական ընկերակցութիւնք» զանազան ձեւերով ու պայմաններով: Այս ընկերակցութեանց հիմնական գաղափարը սա՛ էր թէ, միայն մէկ անձ դրամատէր և ուրիշ աշխատաւորը նորա գերիները չէին, այլ ամենքն ալ դրամատէր էին, և շահը կը բաժնէին ըստ թուակի, այսինքն՝ ըստ կարողութեան և արժանեաց: Դրամագլուխն, ի սկզբան յոյժ աննշան, կը կազմուէր կարգ մը աշխատաւորաց խնայողութեամբ, կամ այն փոքրիկ գումարներով զորս արհեստակիցներէ փոխ կ'առնուին: Կառավարութիւնն ալ փոխատուութիւններ կ'ընէր այսպիսեաց: Դիտուեցաւ սակայն թէ այս ընկերութեանց մէջ յաջողոյցներն անոնք չեղան որք կառավարական դրամագլուխով գործի ձեռնարկած էին. այլ անոնք որոց միակ ապաւէնն էին իրենց խնայողութեանց չնչին արդիւնքն, իրենց հզօր բազմակներ և մինչեւ վերջն աշխատելու յոժար կամքն: Այսպիսի գործաւորք և արհեստաւորք նախապատիւ կը համարէին հացով ու ջրով միայն ապրիլ, մինչեւ որ իրենց փոքրիկ վաստակներով դրամագլուխ մը կազմուէր: Շատ անգամ բնաւ դրամ չէին ունենար, և հետեւապէս թողալ չէին կրնար բաժնել: Իրենց արտադրած աղւրանքներ չէին վաճառուեր, վճարմունք չէին լինէր յաճախորդաց կողմէ, կամ ապրանք չունէին վաճառելու. կը ստիպուէին զրկումներ կրել, ամեն ծախք զեղչել ցլետին աստիճան, և օրերով կերակուրի երես չտեսնել: Բայց տակաւ յաճախորդ ստացան, վարկ մը չինեցին, ընկերային դրամագլուխ մը կարող եղան կազմել, և այսպէս հիմնեցին արտադրական

կամ արհեստական ընկերութիւններ, որոց ապագայն ապահովեալ է :

1848 ին դաշնակի գործարան մը հիմնող գործաւորաց ոմանց պատմութիւնը մանաւանդ շատ հրահանգիչ է : Քանի մը հարէր գործաւորը մեծ ընկերութիւն մը կազմելով, Հանրապետական կառավարութեան 300,000 Փրանք նպաստ խնդրեցին գործարան մը հիմնելու համար : Արհեստական ընկերութեանց նպաստելու համար նոյն միջոցն Ազգային ժողովն 5,000,000 Փրանք քուէարկած էր արդէն : Այս դուռնարը բաշխելու պաշտօն ունեցող յանձնախումբը շատ աշխատեցաւ համոզել գործաւորաց պատուիրակներն որ զեղջեն իրենց պահանջում : Պատուիրակը բացատրեցին թէ դաշնակի շինութիւնը շատ փափուկ և դժուար արհեստ մ'է, և 300,000 Փրանքէ պակաս դրամագլխով կարելի չէ, ուստի փարա մը չզեղջեցին : Ասոր վրայ յանձնախումբը մերժողական պատասխան տուաւ :

Մեծ ընկերութիւն մը կազմելու գաղափարն հետեւապէս ի բաց թողուեցաւ : Բայց տեսէք թէ ինչ եղաւ : 14 գործաւորը, յորս կային յիշեալ պատուիրակներէն ալ երկու հոգի, որոշեցին առանց կառավարական օգնութեան դաշնակի գործարան մը բանալ . — Կարի յանդուգն խորհուրդ այնպիսեաց կողմէ որը ո'չ դրամ ունէին, ո'չ վարկ, ո'չ անուն : Բայց հաւատքը չտրամաբաներ, այլ կը գործէ :

Տասն և չորս գործաւորները գործի սկսան : Ոմանք բերին գործիք, նաև դաշնակ շինելու յարմար փայտեր, 2,000 Փրանք արժողութեամբ : Բայց շրջուն դրամագլխոյ մ'ալ պէտք կար : Մեծ դժուարութեամբ, մէն մի անգամ 10 ական Փրանք կրցաւ դնել : Ուրիշ քանի մը գործաւորը փոքրիկ գումարներ փոխ տուին սոցա : 1849 մարտ 10 ին 229 1/2 Փրանք հաւաքուած լինելով, ընկերութիւնը կազմեալ հրատարակեցաւ : Այդ դուռնարով խանութ մ'իսկ չէր կրնար կազմուիլ : Թողալ վճարելու համար դրամ բնաւ մնացած չլինելով, երկու ամիս փարա մը չառին գործէն : Գործի մէջ չգտնուող գործաւորներու խեղճ կեանքը վարեցին ուրիշ գործարաններու մէջ աշխատող ընկերներէն . հացի կտոր մ'ստանալով : ամեն օր, և մի առ մի տանելով գործաւորաց

րաց դրամատունը գրաւ դնելով իրենց տան կահ կարասիքն և այսպէս օրական ապրուստի համար փոքրիկ գումարներ փոխ առնելով : Բայց այս համբերութեան առաջ մէջ քանի մը տեղերէ հրամաններ ընդունած էին դաշնակ շինելու : Մայիս 4 ին առաջին անգամ ստացան վճարում մը : Պատերազմի մէջ ձեռք բերուած առաջին յաղթութիւնն մ'էր այս : Որոշեցին տօնել այդ օրը : Վճարելէ յետոյ պարտքերն որոց պայմանաժամը լրացած էր, տեսան որ մարդ գլուխ 6 Փրանք 61 սանդղիմ կ'իյնար : Յական Փրանք թոշակ բաժնելով, մնացեալն յատկացուցին եղբայրական ճաշի մը : 14 բաժնետեարք, յորոց չափեր տարի մ'ի վեր դիւնոյ հոսն իսկ չէին առած, համախմբեցան ընկերակցութեամբ իրենց զրկեալ կանանց ու զաւակաց : Ընտանիք գլուխ 32 «» (7 1/2 դրշ.) ծախք ըրին այս աղքատիկ հացկերոյթի համար : Բայց ո'րչափ շքեղ ու լիախորտիկ սեղաններ չեն կրցած այնչափ մնայուն և քաղցր յիշատակ մը թողուլ :

Ամիս մ'եւս հարկ եղաւ որ չաբաթն Յական Փրանքով շատանան : Յունիս ամսոյ մէջ հացագործ մը դաշնակ մը գնեց, փոխարէն հաց տալու պայմանաւ : Գին որոշուեցաւ 480 Փրանք : Լաւ առուտուր մ'էր այս : Գործաւորը վերջապէս ժամանակի մը համար ունէին կենաց անհրաժեշտ պէտքն : Որոշեցին հացը թոշակի հաշուոյն չանցունել, և ամեն մէկուն իւր ախորժակի և ընտանեկան պիտոյից համեմատ հաց տալ : Կուշտ փորով աշխատիլ ուրիշ բան է :

Բայց այս գործաւորը ընտիր արհեստաւորներ էին, և տալաւ կրցան յաղթել առաջին դժուարութեանց ու զրկմանց : Իրենց հաշուէտուարներէ կ'երեւի թէ յաջ գնողաց ո'րչափ յարգ կը ստանային իրենց ճշդութեամբ, հաւատարմութեամբ ու ճարտարութեամբ : 1849 օգոստ. ամսէն իրենց չաբաթական կը բարձրանայ տակաւ 10, 15 և 20 Փրանքի : Բոլոր շահն այս չէր . որովհետեւ շահուց մի մասը կ'երթար կազմել ընկերային դրամագլուխ մը, որ հետզհետէ կը ստուարանար : 1850 տարւոյ վերջն այս էր ընկերութեան վիճակը . — թիւ բաժնետեարք, 52 : Մեծ գործարաններ ու մթերանոցներ, որոց համար 2,000 Փրանք վարձք կը վճարուէր, ո'չ եւս կը բաւէին գործին ընդարձակութեան :

Գործիք ունէին 5,922 Ֆրանք 60 սանդիւմի . պատրաստ վաճառք՝ 22,972 Ֆրանք 28 սանդիւմի . պատրաստ դրամ՝ 1,021 Ֆրանք 10 սանդիւմի . վճարելի պանքրոմն և ըն . 3,540 Ֆրանք . առնելիք 5,861 Ֆրանք 90 սանդիւմի : Գոյք , 59,517 Ֆրանք 88 սանդիւմի : Ասոր դէմ պարտք , 6,587 Ֆրանք 86 սանդիւմի : Առաւելութիւն գոյից , 52,950 Ֆրանք , որ էր 52 բաժնետեարց զբանագլուխը : Բայց այս փայլուն յաջողութիւն չպողեցուցուց իրենց եռանդ և աշխատասիրութիւն : Ընդհակառակն , կը դիտուէր թէ այս գործաւորք , միանգամայն գործին տէրը լինելով , ուրիշ գործաւորներէ աւելի բարեկարգ , աւելի աշխատասէր և աւելի հաւատարիմ էին :

Մասիս անձուկ էջերը չեն ներեր բաղմացնել այս կարգի օրինակներ , զորս ամեն տեսակ արհեստներէ կրնայինք մէջ բերել : Որմնադիր գործաւորք տգէտ մարդիկ կը համարուին : Բայց նոյն տարին (1848 ին) Բարիզի 85 որմնադիրք ընկերութիւն մը կազմեցին , երեք տեսակ ընկերներ ընդունելով . ոմանք միայն իրենց աշխատութիւնը կը բերէին , երկրորդ դաս մը՝ աշխատութիւն և քիչ մը դրամ , երրորդ դաս մը՝ միայն դրամ : Երկու անօրէն դրին , մին շինուածոց , միւսն ընկերութեան հաշուոց համար : Մաքուր և կանոնաւոր էր իրենց աշխատութիւն , և Բարիզի պէս մայրաքաղաքի մը բանի մը մեծ առնելը շինեցին : Տարուէ տարի բարգաւաճեցան , և 1858 ին իրենց դրամագլխոյ վրայ 100 ին 56 չափ կը բաժնէին : Իւրաքանչիւր ընկեր , ապրուստն հանելէ յետոյ , 4,000 Ֆրանք զբանագլուխ ունէր : Այս որմնադիրք ամեն երեկոյ կը ժողովին , զիրար փոխադարձապէս կը կրթեն ուսմանց մէջ , հիւանդ անդամք կը խնամուին ընկերութեան հաշուոյն , և կենաց ամեն պատահարներուն մէջ իրարու կ'օգնեն : — Գարծեալ , գրաշարք անհեռաւես կը համարուին : Բայց նոյն տարին Պ . Ռենուառ իւր մեծ տպարանը փակելու հարկին մէջ գտնուելով , 15 զբաշարք խօսք մէկ ըրին տպարանն իրենց հաշուոյն բանեցնելու համար : Գրաշարապետ տպարանապետ կարգեցին յոյժ չափաւոր թոշակով մը : Ծանր պայմաններով կառավարութենէն 80,000 Ֆրանք փոխ առին՝ տպարանի դեման և առաջին ծախուց համար : Ամեն զրաշար իւր թոշակի մէկ չորրորդը կը թողուր՝ ընկերային դրամագլխոյ մը կազմութեան համար , յորմէ տոկոս կամ շահուբաժին չպիտի առնէր : Երկրորդ զաւելի անհատական դժուար պարագայից հակառակ , զրաշարաց ընկերութիւնն յաջողեցաւ՝ անձնուէր և կանոնաւոր աշխատութեամբ : Քանի մը տարիէն , 80,000 Ֆրանքը կառավարութեան հատուցանելէ զատ , ընկերութիւնն ունէր 155,000 Ֆրանք դրամագլուխ :

* * *

Այս խորհրդածութիւններէ և իրողութիւններէ մեր հանել ուղած հետեւութիւնը պարզ է : Կը փափաքէնք որ Գործակցութեան ոգին Հայոցս մէջ ալ մտնէ . և յայնժամ ապահով ենք թէ տնտեսական բարեւոյրը մը յառաջ պիտի բերէ մեր մէջ : Ընկերակցութեան ոգին Անգլիոյ մէջ անհամեմատ աւելի առաջ դացած է քան Ֆրանսայի մէջ : Աստի կը հետեւեցնեն թէ Ֆրանսայիք ունին թերութիւն մը , որոյ պատճառաւ այս նկատմամբ ետ կը մնան Անգլիացիներէն : Բայց արդեօք ի՞նչ է Հայոց թերութիւնն , որ անոնց մէջ արհեստական ընկերակցութեան ոգին բնաւ մուտ չէ գտած : Արշալի հայ արհեստաւորք կանոնաւոր գործարաններու տէր կրնային լինել այսօր , եթէ իրենց ոյժերը մրացնելով գործէին : Քաղաքական պայմանք նոյն մնալով հանդերձ , մեր արհեստից յիմալին ո՛րչափ կը փոխուէր և կը բարձրէր , եթէ Էնսֆալկան ինքնատէր և անձուկ ոգին ու տղիտութիւնը վերնային , եթէ Էնսֆալկան վերելքը աւելի անդաւորէր և աւելի զիտակցութեամբ աշխատէին , և եթէ նոցա վարպետներն աւելի լուսաւոր դադարիար ունենային իրենց ապրուստն ընձեռող արհեստին վրայ , և առաւել բաղձանք ցոյց տային օր ըստ օրէ դայն զարգացնելու : Բայց ժամանակ է՝ շարժելու այս դասեր , որք , իրենց թերութեամբ հանդերձ , հայ ժողովրդեան արտադրիչ հոծ մասը կը կազմեն , և արժանի են ամեն հոգածութեան : Թէ՛ արտադրութեան և թէ՛ տպարանի մէջ Գործակցութիւնը մեծ բարիք կրնայ բերել մեզ : — Կ . Պոլոյ մէջ կան բնիկ և գաւառացի 200,000 ի չափ Հայք , որք ամեն օր կը դի-

մեն յոյն նպարավաճառներու : Բանի որ նպարեղէնք ամեն Պոլսեանակ Հայու ամենօրեայ սիրտոյց մասը կը կազմեն , և ամեն պարագայի մէջ սպառելի ասկանք են , ինչո՞ւ համար մինչեւ ցարդ հայ սպառողներ կազմած չինին Գործակցական Նպարավաճառանոց մը , յոյն խանութպաններուն ամեն օր վճարուած : միջնորդ չէքը շահելու և ամեն ինչ թէ՛ ածան և թէ՛ լաւ տեսակէն գնելու համար : Արդասիրութիւն չենք, ընեք : Առեւտուրի մէջ ազգասիրական խօսք ընել յիշարութիւն է : Մեք տնտեսագիտական կռուանի վրայ միայն կը կենանք , և կ'ըսենք թէ , վաստակներու այս սակաւութեան մէջ , Կ. Պոլսոյ Հայք ամենօրեայ վաստակի հաստատադիւր մը այլոց կը թողուն , իրենց ամեն օր գնած նպարեղէններուն վրայ 100 ինչ գո՛նէ 10 շահ թողով երկրորդական և երրորդական խանութպաններու , որոյ գումարը տարին հազարաւոր ոսկւոյ կը հասնի : Փոխանակութեան և առեւտրոյ այս լիակատար ազատութեան ժամանակի մէջ , ո՞վ կրնայ ըսել թէ նպարավաճառութիւնն Յունաց առանձնաշնորհումն է , և ուրիշ ինչ ինչ արհեստներալ , զորս Հայք չեն մշակեր , անհպելի են այս վերջնոց : — Այդ խնդիրներ պատրիարքական և առաջնորդական խնդիրներէ նուազ կարելոր չեն թուիր մեզ : Ուստի , ամեն առթիւ օգուտ քաղել պիտի ջանանք՝ անոնց վրայ ուղադրութիւն հրաւիրելու համար :

Բ. Բ.

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԿԱՆԱՅՑ ԴԵՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Գ.

Շարունակութիւն Քրիստոնէական ազդեցութեան իգական սեռի բարեգեմանը վրայ : — Կուսանաց վանքեր : — Աւատապետական և Ապետական հաստատութիւնք :

Մարդկութիւնը կը կրէ յինքեան քաղաքակրթութեան անսպառելի սերմը , եւ միայն ժամանակին ու պարագայից բերմամբը կրնայ իւր ընթացից յառաջադիմու-

թեանը մէջ կանգ առնուլ , կամ քիչ չատ զարդանալ :

Նախնական դարուց պատմութիւնն հետազօտելով , կը տեսնեմք որ քաղաքակրթութիւնն ունեցած է զարդացման պայծառ ժամանակամիջոցներ՝ մասնաւորապէս յԱթէնս եւ ՚ի Հուովմ :

Հռովմէական կայսրութեան կործանման յաջորդող խառնաշփոթ անշխառութեան միջոցին մէջն անգամ , քաղաքակրթութիւնը բոլորովին չէ աներեւութացած : Կանանց սիրտն իրեն ասպատանարան կ'ընտրէ , եւ այսպէս Քրիստոնէութիւնն վերածնելով , զօրաւորագոյն ներշնչմամբ մը պիտի սնուցանէ ժամանակակից ոգին :

Կուսանաց վանքեր

Գիտակեղեակ ցաւոց և հեծութեանց

Ուսաց խնամն տանիլ թշուառաց :

ՎԻՐԳԻԼ :

Ով կրնայ ուրանալ թէ , կուսանաց վանքերն ինչպէս Քրիստոնէութեան , նոյնպէս եւ քաղաքակրթութեան խանձարուրն եղան , որպէս Ասիոյ նոյնպէս եւ Եւրոպիոյ մէջ :

Բազմաթիւ կրօնաւորութիւնք իրենց առաքինութեամբն ու գիտութեամբն նշանաւոր եղած են :

Այս ոգեւորիչ աշխատութեան մէջ , կանայք նշանաւոր դեր մը խաղաղին բոլոր Քրիստոնեայ աշխարհին մէջ : Ոչ միայն աղօթելու , աղքատաց հազուատներ կարելու կամ որբերն խնամելու համար կը հաւաքուէին , այլ իրենց ձեռամբ կ'ընդօրինակէին Ս. Գրոց և ուրիշ հին հեղինակաց պատմութիւններն :

Հայաստանի մէջ Կուսատանաց յիշատակութիւնն նախնադոյն է քան սկզբնաւորութիւն միանձանց : Կը կարծուի թէ Բարթոլոմէոս առաքեալ հիմնած է առաջին կուսատանն ի Հայս , Անձեւացեայ գաւառին մէջ , հիմնած եկեղեցւոյն Ս. Կուսին պատկերն միանձնուհեաց ձեռքն յանձնելով , և անոնց իշխանութեանը տակ մտցնելով նաեւ ուրիշ կանայք՝ որոց համար խրճիթներ կը շինէ , եւ « Տեսուչս հրամայէ լինել հաւատացելոց , կացուցեալ անդ եւ քահա՞նայս յիւրոց աշակերտաց : » (1)

(1) Խորենացի :

« Զտեղին Հոգոց վանք, անուանէ,
 « Եւ 'ի քրէեր կանայս յանձնէ,
 « Խորհիթ փոքրիկ նոցա շինէ,
 « Եւ 'ի գերբուկըս բաժանէ:
 « Կացուցանէ զՔոյրն Յուհատայ,
 « Մայրպետ կրօնից գլուխ նոցա,
 « ԶՔոյրն Որմզդայ եւ Մառութրայ,
 « Եւ զայլ կանայսն յետ նոցա:

ՍՏԵՓԱՆՆՈՍ

Լուսաւորչայ օրով Երուսաղէմայ մէջ Ամատունեանց նախարարներն երկուսն վանքեր հիմնած էին, ուր կուսանք Սիրոնի կողմը կը բնակէին: Մեծն Ներսէս համօրէն Հայաստանի մէջ Կուսանաց վանքեր հիմնած է:
 « Քանզի յիւրում կենդանութեան երանելի
 « ւոյն Ներսիսէր յինեալ զայս կուսատանս
 « յամենայն դաւառս, զի որ միանգամ կուսանք
 « եւ հաւատացեալք իցեն՝ անոր ժողովեացին
 « 'ի պահս եւ յաղօթս, եւ կերակրիլ
 « յաշխարհէ եւ յիւրաքանչիւր ընտանեաց:
 « Զայն ամենայն աւերել հրամայէր
 « Պապ Թագաւորն. եւ զկուսանսն հաւատացեալսն
 « տայր հրաման 'ի խառնակութիւն պղծութեան: » (1)

Սակայն որչափ զօրաւոր ալ եղած ըլլային հալածանքն, այս կուսանաց վանքերն եւ մենաստանք չէին կրցած փակուիլ ինչպէս կը հասկցուի Նղիշի յիշատակութենէն:

Յովհաննէս կաթողիկոսի յիշատակագրոց մէջ եւս կը տեսնուին, իններորդ դարու մէջ կրօնաւոր կանայք. « Դադարեալ կային,
 « յամուրն Կարուց, խարանաղդեաց կրօնաւորեալք՝ տիկինն Հայոց կին Սիւստայ
 « (արքայի), եւ նու նորին իսկ, որ էր դուստը
 « արքային Նգերացւոց, եւ այլ եւս
 « կանայք ազատագունդ արանց: »

Տասներորդ դարուն մէջ երեւելի հանդիսացած է 'ի կրօնաւորեալ կանայս Շուշան, կին Գրիգորի Պահլաւունուոյ, որ Գրիգոր Մագիստրոս զնա ներբողած է: Ըստ Ասողկայ Թրին վանքն յանուանէ կը յիշատակուի լբրեւ վանք կանանց. « Զ' մայր
 « Աբասայ, Թագաւորին Կարուց զվարս կրօնաւորութեան
 « յանձն առեալ երթեալ բռնակէ 'ի տեղին, որ Թրին
 « վանք անուանի: »

Երկուստասներորդ դարուն մէջ, Քորայր վանքը յիշատակուած կը տեսնուի վարդան պատմագրէն. « Էին եւ կանայք Թագաւոր

« յաղուէր կրօնաւորեալք կուսութեամբ 'ի
 « Քորայրն, Խորասու եւ Մարիամ. առ որս
 « գրէր սուրբ վարդապետն սարկաւադ ըզ-
 « գուշական խորխոս: »

Ստեփաննոս Օրպէլեանի հետեւեալ յիշատակագրութիւնը առաւել կը պարզէ կուսատանաց պաշտօնն ի Հայաստան:

Աղուանից վարագրատ գահերէց իշխանն զուստրն Շահանդուխտ, անհամեմատն ի գեղեցիկութեան, Հայկազնեայց Թորգոմեան իշխանի մը հարսնութեան տարուած միջոցին, Սիւնեաց գաւառի Բաղուց սահմանին մօտ դարանի կեցած Խամայէլացի զօրագունդ մը յանկարծ հարսնցուին ընկերակցող հեծելազնոյին վրայ կը յարձակի եւ զայն կը կոտորէ, մեծահամբաւ կոյսն յախշտակելու համար:
 « Յայնժամ Շահանդուխտ յօգնութիւն կոչ-
 « եալ զՍուրբ Աստուածածինն եւ զՍուրբ
 « Հովնիսէ, մտրակեալ զերկարն իւր, ըն-
 « կեց զինքն երկվարան հանդերձ յահագին
 « բարձրութենէ քարակտուր լերին 'ի վայր,
 « որով աներեւոյթ զօրութեամբ էջ անկնաս
 « մինչ 'ի գետին: Անդ ուխտ եղեալ՝ կուսութեամբ
 « եկաց մինչ 'ի վախճան իւր, եւ զինչս իւր
 « բաշխեալ աղքատաց 'ի ձեռն
 « Նպիսկոպոսին Սիւնեաց, անդ էն այլ եւս
 « կուսանս ժողովեաց առ ինքն, եւ մեծ-
 « մեծ ճգնութեամբ կեցեալ ամս երեսուն
 « եւայլն: »

Ստեփաննոս Օրպէլեան ընդարձակապէս կը պատմէ զայս, Շահանդուխտի ձեռամբ զբռեալ նամակէ մը քաղելով, ուրիշ յայտնի կերեւնայ թէ լրմէ առաջ ուրիշ կանայք այսպէս ըրած էին, այսինքն « Ժողովել ըզ-
 « կուսանս եւ դաստարակել 'ի հոգեւոր
 « կրթութիւնս, յորմէ եւ ինքն օրինակ առ-
 « եալ հրամանաւ Նպիսկոպոսին զնոյն արար
 « յայնմ անապատի: » (1)

Բազմաթիւ են ազգային յիշատակարանաց մէջ բարեպաշտ Հայ տիկնանց անուանքն, որոց մէջ դիտութեամբ նշանաւոր հանդիսացած են Ս. Վարդանայ եղբոր Հրամայեալի կինը Զուրիկ. Ստեփաննոս Սիւնիին քոյրն Սահակադուխտ, որ միանգամայն հրմուտ էր երաժշտութեան արհեստին, տաղեր կը յօրինէր, կը նուագէր եւ կ'ուսուցանէր. Մարիամ, դուստր Աշոտայ Առաջնոյ, որոյ

(1) Բուզանդ Պատմագիր:

(1) Հ. Ղ. Ինճիճեան:

ընթերցասիրութեան արդիւնքն եղած է Յովհաննու մեկնութեան ընտիր թարգմանութիւնը:

Այս կուսանաց վանքերու հաստատութեան կանոնաց բարոյական հաւասարութեան վրայ ըրած ազդեցութիւնն՝ հաւասար միօրինակութիւն մը կ'ընծայէ Աւրոպական եւ Ասիական դաւառաց մէջ:

Միջին դարու կանոնաց դաստիարակութեան մասին, ժողովրդական պատմիչն Միլլէ խմատուն կուսանաց յիշատակութիւններ կընէ, որոց մէջ հռչակաւոր եղած է մասնաւորաբար Սրբուհին Ժէրգրիւտ, որոյ՝ Ս. Գրոց ամենէն խոթին մասանց մեկնութեան վրայ խորհրդակցելու կը դիմեն եղբւր խիստ հեռաւոր տեղերէ:

Նոյնպէս արք եւ կանայք հաւասար յարգանք կը հետեւին եղբւր Սրբուհւոյն Պէրդիւէայ դասերուն, Փարիզի մօտ, մենաստանի մը մէջ:

Մեծին Բրիտանիոյ թագաւորք, վարժարանաց եւ մենաստանաց հաստատութեան համար իրեն աշակերտներն կը խնդրեն եղբւր:

« Այինչ այնչափ նպաստեց կրօնաւորութեանց մոռաւորական յառաջդ խնդրեանը « քան արանց եւ կանանց վանքերու մերձաւորութիւնը: Սորա շատ ատեն անպատշաճ էր, եւ մինչեւ իսկ բարբարոս ցեղերու եւ կուսակալներու մէջ: Անհնար էր ուրեմն առանձնութեան մէջ, եւ անօգնական թողուլ կրօնաւորութեան: Նոյնպէս մօտ կը բնակէին, դրացի վանքի մը մէջ: Նոր կու միաբանութիւնը կը հաւաքուէին Աստուծոյ ձայնը լսելու համար: Աշխատութիւնը բաժանեալ էին: Կանայք կը մանկէին, կը կարդային եւ կ'աղօթէին. արք աւելցնէ համար կաշխատէին երկրագործական եւ պարտիզական գիւղական: Նշանաւոր մարդիկ, որովք Եկեղեցին կը սլարժի, չէին անգոսներ այս խոնարհ աշխատանքն: ⁽¹⁾

Մենաստանաց մերձաւորութիւնն, որոց զեղծումներն անտարակոյս չափազանցութեամբ նկարագրուած են, ուսման եւ առաքինական մրցանաց գեղեցիկ ասպարէզ

մը բացած էր կրօնաւորաց եւ կրօնաւորութեանց մէջ: Արք կը պարտաւորէին չափաւորել իրենց մեծանձնութիւնը, եւ մասնակցիլ կանանց բարոյական շնորհաց:

Կանայք ալ միւս կողմէն, տեսնելով արանց խտաւրեր ճշնութիւնը, վեհանձնաբար կը սլանային դէպ ի Աստուծահաճոյ գործողութեանց:

Ըստ Պօլիէր, « Իրարու կ'օգնէին անհարթ ճամբան մագլցելու համար: »

Առաջին խաչակրաց եռանդուն ժամանակն կ'ընէ արանց հաւասարեցնելով չի բաւականացաւ, այլ աւելի բարձրացուց զայն:

Զմարդիկ իրենց պարտուց եւ արժանապատուութեան գագաթանց կոչելու համար, խիստ եւ բացարձակ օրինաց պէտք տեսնուած էր. աշխարհային փառքերէն մեկուսանալով հոգիներն պէտք էր նուաճել:

Այս եղաւ 10 էն մինչեւ 12րդ դարու բարեկարգաց ծառայութիւնը, որք կարծուած էն աւելի յառաջացուցին ընկերութիւնն քաղաքակրթութեան շաղկիւն մէջ:

Բազմաթիւ են երկու միաբանութեան, մին արանց եւ միւսն կանանց, բաղկացեալ վանքերն ի Ֆրանսա, իրենց գլուխ ունենալով արքայուհիք, որոց արք եւս կը հնազանդէին: Նա էր որ կը պատժէր, կը ներէր, միով բանի վանքին բոլոր ստացուածքն նորա ձեռքն էին:

« Աւետարանի մէկ խօսքը ներշնչած էր այս հաստատութիւնը — « Ահա քու մայրդ, « գոչեց Բրիտոս խաչին վրայէն, առ Յովհաննէս, Ս. Կոյսն ցուցնելով: » ⁽¹⁾

Գրիստոսի ոգեւոյն վայրկեան արտասանած այս խօսքն, որ կնիքն եղաւ իւր պատուիրանաց, կործես թէ բացարձակապէս մատնանիլ կ'ընէր, երեւան կը հանէր, կանանց դերը:

Եւ որովհետեւ մարդկային ազգը պաշարող խաւարամիտ բռնակալութիւնը, Աւետարանն իրեն ուղեցոյց ընդունած ըլլալով հանդերձ, չէր մերկացած տակաւին այն տգիտութենէն, որպէս զի կարենար հանդուրժել զկանայս իրենց նուիրական պաշտօնին գործադրութեանը մէջ տեսնելու, իմաստուն գլուխներ խելք խելքի տալով, վանական հաստատութեանց մէջ կը փորձէին նոր օրինաց գործադրութիւնը:

(1) Մեյնէ:

(1) Մեյնէ:

Մ. Գրեյս-Բեռն. Աստատեպրակտ

Եւ Աստատեպրակտ հաստատութիւն

Մինչեւ 12րդ դարուն սկիզբը, կանանց վիճակն իսկապէս անորոշ էր: Իրենց ունեցած վիճակն եւ ազդեցութիւնն՝ իրենց Փ. Գրեյս-Կան գեղեցիկութեան կամ ճարպիկութեանը կը պարտէին: Իրենց անձնական արժանիքն, սրտի ու մտքի յատկութիւններն բնաւ նկատուածեան չէին առնուեր: Վասն զի մարդիկ բոլորովին զուրկ ըլլալով քաղաքակրթութեան օժիտն եղող հոգեկան փափուկ զգացումներէ, իրենց շփոթութեան հաճոյքն միայն յազդեցնել կ'աշխատէին:

Եւրոպական քաղաքակրթութեան տաղանդաւոր պատմագրոց մէկն կանանց վիճակին բարեփոխման ազդեցութիւնն աւատապետութեան կ'ընծայէ:

«Աւատապետն ձմեռնային ցրտաշունչ «եղանակին, անմատչելի պարիսպներով շրջապատեալ դղեակին մէջ առանձնացած՝ «պատրաստեալ էր, իւր կիներ զաւրկներուն հետ, իբրեւ իւր հաւասարն նկատել, «վասն զի իւր միակ մտերիմ եւ յարատեւ «ընկերութիւնն կը կազմէին:» (1)

Անտարակոյս մեծահանձար պատմագրին հետ պէտք է ճանչնալ թէ աւատապետական կեանքը նպատած է մեծապէս ընտանեկան կենաց եւ կանանց վիճակին բարելոքմանը:

Սակայն պէտք չէ մոռնալ այն զանազան Աստատեպրակտն (2) հաստատութիւնը, որոց նպատակն եղած կերեւնայ, ի սկզբան, օրինաց պակասն զինու զօրութեամբ լրացնել: Սոքա պարտաւորեալ էին մասնաւորապէս խնամել տղարն ու հարստահարեալն եւ պաշտպանել անմեղութիւնն:

Իրենց խնամոց ներքեւ առնելով երկչոտ երիտասարդուհին եւ անպաշտպան այրին, ասպետք կամաց կամաց կը մօտենային կանանց: Երկուց սեռից իրարու հետ ունեցած բնական ձկտման, որ մինչեւ այն ատեն առանձինն կը տիրէր ընկերական յարաբերութեանց մէջ, միանալով նաեւ այն յարգանաց զգացումն, որ կանանց հետ մըջ-

տատեւ յարաբերութիւնը եւ երկար խօսակցութիւնը կ'ազդէին ասպետաց, կ'աղնուացնէր յետզեմտէ նոցա բարքը, եւ փափուկ զգացումներ կը յաջորդէին նախնական կոպիտ բարոց:

Եւ ըստ որում մարդս քանի որ քաղաքակրթի, պարզ զգայարանական հաճոյք անբաւական ըլլան իրեն եւ աւելի երկարատեւ զուարճութեանց կ'ափնկալէ իւր ընկերոջը քով, ահա զայն գուշակելով կամ լաւ եւս իրենց հրաշալի բնազդման զօրութեամբ կանխատեսելով մասնաւորապէս ճշրանայի կանայք աւելի սրամիտ քան զայլս, պատեհութիւն չեն կորսնցնէր արանց սըրտին տիրելու ճամբան գտնելու համար:

Թէ բնութիւնն ազահ չէտ ինձ գեղեցիկութիւն,

Ձիրք մտացս պարտին ընու զայդ բնութիւն:

ՍԱՅՏ

Ուստի, ո՛չ միայն ուղղութիւն կուտան, այլ կը քաջալերեն, մարդկային սրտի թաքուն բնազդումն ի խնդիր փափկասուն հեղատութեանց: Սրոյ սպասարկութեան նորածեւ եղանակ մը կ'երեւակայեն, որ աւելի մաքուր եւ սրբացեալ էր, քան ասպետական հաստատութեան հնարած նախնական եղանակն: Լծորդելով սոյն սպասարկութեան Փըրիստոնէական ողջամիտ բարոյականին քարոզած արժանապատուութեան, հաստատամթտութեան եւ արիւթեան սկզբունքն, իրենք զիրենք իբրեւ վարձատրութիւն կը խոստանան այն ասպետաց՝ որք իրենց արժանի ըլլալու համար, պէտք էր մշակամայն արի, անկեղծ, առաքինի եւ հաւատարիմ ըլլալին:

Քիչ ատենէն ասպետք իրենք զիրենք յայտնադէս տիրանաց սպասաւորն հրատարակելն իրենց պատիւ համարեցան, եւ մինչեւ իսկ քաղաքացիներն իրենց ծառայած տիրոջ համազգեստն կը կրէին:

Կամայ կամայ, զինուորական եւ ուրիշ հանդէսներու մէջ յաղթական վարձատրութիւնը ժողովին ամենէն երիտասարդ կամ գեղեցիկ կնոջ ձեռամբ բաժնուելու սովորութիւնն տարածուելով, կանայք սկսան մեծ նաստանէն եւ գղեպկէն դուրս ելլել, եւ քաղաքական կենաց վրայ ալ ներգործել նաեւ իրենց կենսարար ազդեցութիւնն:

(1) Կեղծ:

(2) Շըվալերի:

կանանց վիճակին. այս փոփոխութիւնը ծնունդ տուած է շատ մը զանազան հաստատութեանց, ինչպէս նաեւ զեղծմանց, որոց ամենէն հետաքրքրականն եղած են Սիրային ատեաններն, ⁽¹⁾ զորս յաջորդ յօդուածին մէջ պիտի տեսնեմք:

ՏԻԳԻՆ ԵՈՒՍՈՒՅԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՏԻԳԻՆ ԺՕՐԺ ՍԱՆՏ

Օրիորդ Ամանտին-Լիւսիլ-Օռօն-Տիւբէն ծնաւ ի Փարիզ, 1804 Յուլիս 5 ին: Իւր դաստիարակութիւնն ստացաւ նախ Նօհանի դղեակին մէջ որ ի Պէրրի, յետոյ Անգլիական Օգոստինեանց վանքը:

Օռօն Տիւբէն, 1822 ին ամուսնացաւ Պ. Տիւտրլանի հետ եւ ունեցաւ երկու զաւակներ, մին մանչ, միւսն աղջիկ: 1831 ին իւր աղջկանը հետ Փարիզ բնակեցաւ, ուր՝ ապրելու համար աշխատելու ստիպեալ՝ գծագրութեամբ եւ նկարչութեամբ զբաղեցաւ:

Իւր առաջին վէպը գրեց Ռօշէ Պլանշ, աշխատակցութեամբ ժիւլ Սանտյոյ, յետոյ գրեց առանձին Էնթան, եւ ստորագրեց ԺՕՐԺ ՍԱՆՏ:

Տիկին Ժօրժ Սանտ բազմաթիւ գեղեցիկ վիպասանութիւններ հրատարակեց, ընդ որս նշանաւոր են Գոնաթէլ, Ռիտօլտա Կոնսէնթին, Փարիլ Փարիլ, Ֆրանսուա լը Դոմէ, Վելլէր Դոմէ, Պառ Տօնէի գեղեցիկ պարաններ, Կենաց պարան-Էնթան, Էլ Է Լէ-Է, Օր Լա-Էնթէն, Երիտասարդ աղջկան մը խոստովանութիւն, Էնթան: Աշխատակցից եղաւ Ֆիկաուօի, Ռիվիլ տէ տէօ Մօնտի, Մօնտի, Ռիվիլ Էնթանտանտի, և 1848 ի յեղափոխութեան ատեն, հասարակագետական թերթերու մէջ՝ ազգասիրական ոգւով վառեալ՝ քաղաքականութեամբ զբաղեցաւ:

Կըսեն թէ, կայսրութեան ատեն, բարեկամներ խնդրած են Ժօրժ Սանտէ արտօնել զիրենք աշխատիլ Ֆրանսական Ակադեմիոյ անդամ ընտրելու զինքն. բայց նա չէ ընդունած:

Ժօրժ Սանտ մեռաւ Նօհանի մէջ 1876 յունիս 7 ին, եւ հոն կը գտնուի իւր գե-

րեզմանն: Այս օրերս իւր արձանը կանդնեցին Լա Դադալ քաղաքին մէջ, Պէրրի գաւառին հարաւակողմը, եւ վառաւոր հանդէս մը տեղի ունեցաւ օգոստոս 10 ին՝ որոյ առթիւ հարկ կը համարիմք հռչակաւոր դրազիտուհւոյն վրայ մի քանի ծանօթութիւններ տալ մեր ընթերցողաց:

* * *

Անկուհեաց վանքին վրայ ընդարձակօրէն կը գրէ Ժօրժ Սանտ իւր Կենաց պարան-Էնթան գրքին երրորդ հատորին մէջ:

Օռօն Տիւբէն, առաջին հաղորդութիւնն առնելէ յետոյ, Անկուհեաց վանքը մտաւ իւրեւ ուսանող: Իւր մեծ մայրը արդէն յեղափոխութեան ատեն հոն բանտարկուած էր: Այդ վանքը մեծ համբաւ ունէր: Գրում ուէին իշխանութեան ատեն Փարիզի մէջ գետեղեալ անգլիական հաստատութեանց մին էր, ուր լաւ հսկողութեան ներքեւ պատուական դաստիարակութիւն մը կը տրուէր: Անգլիական մենաստանն եւեթ որ այժմ Նէօյլի փոխադրուած է, անասան մնացած էր ի Փարիզ երկար տարիներէ՝ ի վեր զերծ մնալով յեղափոխութեանց փոթորկալից աղէտներէն:

Տիկին Սանտ, իւր կենսագրութեան մէջ, սիրուն և յոյժ գողտրիկ ոճով կը նկարագրէ իւր մանկութեան օրերը վերջիջեալ վանքին մէջ: Իւր կենաց ամենէն սիրելի մասն եւ ամենէն քաղցր յիշատակն կ'անուանէ այդ մշտնջը:

« Ընդհանրապէս, կը գրէ, այդ կանացի մեծ ընտանեաց մէջ ամենքն ալ Աստուծոյ նման բարի են: Ի՞նչպէս չսիրեմ կենացս անդորր եւ երջանկաւէտ տարիներուն յիշատակըն: Թէեւ հոն ֆիզիկական և բարոյական տառապանք ունեցայ, սակայն երբէք չը նեղուեցայ այնքան, որչափ այլուր օտարաց ձեռքէն:

« Առանձնասենեակս 10 ոտք երկայնութիւն եւ 4 ոտք լայնութիւն ունէր, այնպէս որ մահճակալէս կրնայի գլխովս առաստաղին հովի: Դուռը բացուելով պատուհանին հանդէպ գտնուած դարասալոր պահարան մը կը շօշափէր, եւ զայն գոցելու համար հարկ էր չորս փոքրիկ ապակիներէ բաղկացեալ պատուհանին որմնածակին մէջ մտնել:

(1) Գոնէր-տ'Ամբը:

« Սակայն գեղեցիկ տեսարան մը կը վա-
յելէի : Պարտէզին բարձր շաղանակներուն
գազաթիւն վրայէն Փարիզի մէկ մասին տե-
սարանը կը գրաւէի : Մեր ցանկին բոլոր-
տիքը լայնարձակ տնկարաններ եւ բանջա-
րանոցներ կային : Եթէ բնակարաններու եւ
չէնքերու կապոյտ գլուխներ հորիզոնս չփակէր,
ինքզինքս պիտի կարծէի ո՛չ թէ գլուխկի-
պլ ահագին գլուխ մը մէջ : Գլխերը, լուս-
նի լոյսով, պատկերն հիանալի էր :

« Կարասիներս էին ներկեալ փայտէ մահ-
ճակալ մը, հինցած դարանաւոր պահարան
մը, յարկէ աթոռ մը, ողորմելի դորգ մը,
եւ սիրունակ տաւիղ մը՝ որ երբեմն մեծ
մօրս թեւերուն մէջ թռթռացած էր, եւ զոր
ես ալ մի քիչ կը վարնէի երգելով » :

Միտառուն Օռօն Տէրէնի պատանեկու-
թեան ծաղկաւէտ էջերը օրինակել աստ որ-
քան յանկուցիչ է, բայց պէտք է կանգ
առնուի :

* *

Ժորժ Սանտ ի՞նչպէս անցուց, Նոհանի
մէջ, իւր կենաց երկար տարւոյնը :

Առաւօտը, ամառ թէ ձմեռ, սպասուհին
կը մտնէր Ժորժ Սանտի սենեակը, զնա կ'ար-
թընցնէր, թեթեւ նախաճաշիկ մը կը բերէր
եւ քովը կը դնէր նամակներ, լրագիրներ,
գրքեր զորս հանրածանօթ կամ անծանօթ
հեղինակներ իրեն ուղղած էին : Ամենքը կը
կարդար, ամենուն կը պատասխանէր : Ա-
ռանց երբէք քաջալերելու նորեկ մը որ ան-
կարող էր գրելու, յորդոր կը կարդար ա-
մենուն աշխատիլ, վասն զի աշխատութիւնը,
կ'ըսէր, պէտք մը եւ բարիք մ'է միանգա-
մայն :

Այն օրին, Ժորժ Սանտ կ'իջնէր սեղա-
նատուն ուր խմբուած էին իւր ընտանիքը եւ
հիւրեր : Ընտանիքը կը կազմէին իւր որդին
Մօրիս, նորա կինը, եւ թոռները, պաշտօնի
արարածներ, Օռօր եւ Կապրիէլ : Գուրգու-
րանօք կը համբուրէր իրենները, բարեկա-
մական ձեռք մը կ'երկնցնէր հիւրերուն, չը-
նիկին գոգանք մը, թռչնիկներուն հացի
փշրանքներ բաշխէին յետոյ, կը հրաւրէր
զամենքը պոռոյտ մ'ընել պարտէզը կամ գը-
րացի անտառն : Իւր սիրած ծաղիկներուն
կը մօտենար, կը խօսէր նոցա հետ եւ կը

պատուիրէր թողուլ որ ապրին : Ժամը եր-
կուքն Ժորժ Սանտ կը մանէր իւր աշխա-
տութեան սենեակը, ուր կար իւր դրժա-
տունը, եւ թռչնիկներուն դաս մը տալէ
յետոյ, հանդարտ, ժպտալից, գրասեղանին
առջեւ որ ծածկուած էր տղայական խա-
ղալիքներով, կը գրէր, կը գրէր : Որքան ալ
մոլորեալ բարձրանար իւր երազներուն մէջ,
դարձեալ գորովալից աչօք կը հետեւէր Օռօ-
րի եւ Կապրիէլի մանկական խայտանաց, եւ
իւր դէմքին վրայ կը ցոլանային խնդութիւն
եւ ներքին երանութիւն :

Ժամը ճիշդ վեցին, երեկոյեան ճաշէն եւ
ծաղիկներու կրկին այցելութենէ յետոյ, Տի-
կին Սանտ որ քաջ երաժիշտ էր, դաշնակ կը
ղարնէր եւ տղաքները կը պարէին : Երբեմն,
առանց ներկայից ուշադրութիւն ընելու,
մի քանի ժամ կը նուագէր : Շատ կը սիրէր
Մօզարտ, սպանիական եղանակներ, եւ տե-
ղական հին երգեր, զորս իւր տղայութեան
ատեն ինքն եւ եղբայրը սովորած էին, հե-
րարձակ, գիւղացւոց հետ պարելով :

Ժորժ Սանտ թուղթ կամ սովինօ կը խա-
ղար երբոր տղաքները կը մեկնէին, եւ նո-
ցա պաճուճապատանաց համար զգեստներ
կը կարէր շատ ճարտարութեամբ : Երբեմն
ալ ջրանկար պատկերներ կը յօրինէր, եւ
կամ քառանկար կը բանար մինչեւ կէս գիշեր :
Գծուարաւ կը հաճէր երթալ պառկելու,
այնպէս որ երբեմն Մօրիս, իւր մայրը քաղց-
րութեամբ յանդիմանելով, կ'ստիպուէր ճը-
րանքները տանիլ :

Ամայի դաշտի մը խորին հանդարտութեան
մէջ, գիշերային կանթեղներու մեղմ լոյսով՝
պէտք էր լսել Ժորժ Սանտ իւր ատենի մարդ-
կանց եւ իրերու վրայ խօսիլ, գողորիկ պեր-
ճախօսութեամբ եւ անհուն ներողամտու-
թեամբ : Ով որ չէ լսած Ժորժ Սանտ այդ-
պիսի մտերմական գիշերներու մէջ, զայն եր-
բէք չէ ճանչցած :

Այն գիշերէն յետոյ, իւր սենեակին մէջ
առանձնացեալ, դարձեալ կ'աշխատէր, եւ
եթէ, տակաւին իւր գրասեղանին առջեւ,
արչալոյսը յանկարծ ծագէր, կը մօտենար
պատուհանին, օրուան առաջին ճառագայթ-
ները կ'ողջունէր, եւ առաւօտեան զովու-
թիւնը կը շնչէր հեշտաբար : Իւր մահուան
երեք չորս տարի մնացած, այլ եւս գիշեր-
ները չէր գրեր, թէեւ կը հսկէր :

Սոսանց ի հաշիւ առնելու թէ՛ Ծրանասյի եւ թէ՛ օտար երկիրներու հետ իւր բազում թղթակցութիւնը, Ժորժ Սանտ ամեն օր 40 թերթ կը ընուր իւր կորովի եւ ընթերցելի գրով, եւ կողովին մէջ կը նետէր ինչ որ լաւ չէր գտներ:

Իւր կենաց վերջին տարիները բերկրաւից եղան. սաեպ չէր երթար Փարիզ, եւ կը զուարճանար իւր որդւոյն Մորիսի պատրաստած պաճուճապատանաց (ֆաբլետներ) ներկայացմանը: Մանրագին կը հագուէր ներկայացմանց երեկոյները, իբրեւ օրէնայի երեկոյթի մը, եւ կը պահանջէր որ հիւրերն ալ նոյնպէս ընեն:

Մեծ ուշադրութեամբ կ'ունկնդրէր այն երգախառն կատակերգութեանց, զորս Մորիս մասնաւորապէս կը յօրինէր գրօսցնելու համար իւր գորովագութեւ պաշտելի մայրը:

* *

Օգոստոս 10 ին, Լա Շաղըր փողբիկ քաղաքը մաքուր դրօշակներով զարդարուած կ'սպասէ: Բնակիչները, իրենց հին տուններուն սեմերուն վրայ հաւաքուած, պատուասէր հետաքրքրութեամբ կը դիտեն օտարականներն որք զուարթադէմ, պճնեալ, դեղազարդեալ կուգան տօնել մեծ և արժանաւոր հեղինակի մը յիշատակը:

Ժամը երեքին, գլխուորական երաժշտութիւնը կը հնչեցնէ Մարսելէէն, Փրանսացւոց ազգային երգը: Յանկարծ, խոր լռութեան մէջ, հոծ, յուզեալ ամբոխի մը աղաղակներով, լուսարձակ արեգական մը ներքեւ, կ'լինայ այն քօղը որ մէկ շաբաթէ ի վեր կը ծածկէր Ժորժ Սանտի արձանը:

Անիծապէս պսակներու դէզերով կը ծածկուէր կրանիդեայ պատուանդանը, որոց մէջ ուշադրութիւն կը գրաւէն Խտախոյ ծերակոյտին փոխ-նախագահ Ալֆրէդի մարքիզին եւ Տիկին Բօլին վարտօն պսակները, Հեղինակին վիպասանութեանց դիւցազունները յղած էին պսակներ, որոց ժապաւէններուն վրայ կը կարդացուէր Փոքիկ Թոքէր Ժորժ Սանտ, վաշտաբէն Ժորժ Սանտ, եւայլն:

Ներկայից մէջ կը նշմարուին Պ. տը Լէսէքս որ կը նախագահէր, Քամբֆէն՝ Գեղարուեստից տնօրէն, գաւառին երեսփոխանները, քաղաքապետը և այլ պաշտօն-

եայներ, նշանաւոր անձեր, Ռեշէ- Կէ Կէ Մօնթի, Ֆիլարէ, Թանի, Ռաբէլ, Նոմէլ Ռէ-ֆէն ներկայացուցիչները, եւ Մորիս Սանտ եւ իւր ընտանիքը որք խանդաղատանօք կը դիտէին իրենց մօր եւ մեծ մօր մատուցեալ մեծարանքը:

Ատենախօսութեանց մէջէն կը Թարգմանեմը աստ Արսէն Հուսէյի մի քանի խօսքերը:

«Հանճարը սեռ չունի: Կան արք որք կանանց «պէս կը գրեն, կան կիներ որք արանց պէս կը գրեն: Ըսուած է թէ երբէք կնոջ ձեռքեր հրա- «շակերտ մը չեն յօրինած: Չարախօսութիւն է այս: «Հասի քան զամենայն կանայք զաւակներ — կը սխա- «լիմ — մարդեր յառաջ կը բերեն, եւ չեն շատա- «նար այսչափով եւ յառաջ կը բերեն նաեւ գոր- «ծեր ու հրաշակներ: Ահա այդ պատճառաւ է «որ Ծրանասյի Ակադեմիան անիրաւ եղած է կա- «նանց նկատմամբ: Կ'ըմբռնենք թէ կանայք բնա- «գուն վրայ պետք չէ երեւան, ընտանիք զերենք «իւր մօտ կը կոչէ, բայց չենք կարող ըմբռնել թէ «Ակադեմիան զիրենք չընդունի: Առանց անցելոյն «մէջ խորասուզելու, ցաւալի՞ չէ որ Տիկին տը ԼՍ- «թալ, Օր. Մարս, Տիկին տը Ժորարտէն, Օր. Ռա- «չէլ, Տիկին Սանտ Ակադեմիոյ անդամ ընտրուած «չըլլան: «Անմահներն» նուազ ձանձրոյթ պիտի ըզ- «գային այդ անաւոր կանանց ընկերակցութեամբ:

«Աւելի բարեբաղդ քան զԱկադեմիան, «Գը- «րագիտաց ընկերութիւնը» փայլ համարեց կցել իրեն «Ժորժ Սանտի մեծ անունը, այդ «անմահին» ա- «ռանց Ակադեմիոյ:

«Ինչ որ ալ լինի իւր փիլիսոփայական շեշտը, «Ժորժ Սանտ կին է բառին ամենայն պայծառու- «թեամբ: Երբ բանաստեղծ էի՝ գրեցի — «Այր է «հանճարով եւ կին է սրտով»: Բանաստեղծը սը- «խալած էր. ամենայն ինչ կին է ի Ժորժ Սանտ, թէ՛ «հանճարը եւ թէ՛ սիրտը:»

Յետոյ Ալպէր Տէլբի արտասանեց խիստ գեղեցիկ ճառ մը յորում ըսաւ.

«Թատերգակ հեղինակներ ու ժողովուրդը կ'ող- «ջունեն դէմք, Ժորժ Սանտ, դու քոյր Աղբասնդր «Տիւմայի եւ դո՛ւստր Շէքսպիրի: Կը հիանանք քու «թատերական դրօշոյդ վրայ, զի հզօր է նա որքան «աղին: Դու ունեցար հանապաղ արդարութեան «վեճ՝ գաղափարը եւ ճշմարտութեան մտկան սէրը: «Քո սէգ դիւցազնուհիներն պիտի գեղեցիկ «մարդկանց յիշատակին մէջ, զերդ սպիտակ ուրուա- «կաններ: Անմեղ լինէին թէ մեղապարտ, դու զա- «նոնք իտեական ըրիր տալով մի քիչ քու հոգիէդ որ «այնքան բարձր է, եւ խիստ շատ քու սրտէդ որ «այնքան մեծ է: Թող բանան քու թատերգութիւն- «ներդ եւ վճռեն: Թատերաբեմին վրայ դու արձա- «կեցիր միայն մեծանձն եւ անձնուրաց կըլեր: «.

«Քու արձանդ, Ժորժ Սանտ, բարձր է իբրեւ դաս

« մը եւ զօրաւոր իբր օրինակ մը: Լաւ է որ, այն-
« պիտի առնեն մը ուր խոտախանի սատակիչք կ'ուզեն
« վանել պատուական քերթոցները եւ քանդել հին
« պաշտօնալ կուռքերը, խոտախանի հոյակապ ներքն-
« եալ մը կանգնի անշարժ եւ յաղթական իւր անմա-
« հոյութեան դրօշ մէջ: »

« Ժօրժ Սա'նտ, կ'ողջունեն զբեղ թատերգակ
« հեղինակներն ու ժողովուրդը: »

Ալպէր Տէյրի' յաջորդեց Պ. Բօլ Մօրիս
որ Ժօրժ Սանտի աշխատակից եղած իւր ե-
րեք թատերգութեանց մէջ, եւ այն օրը
կը ներկայացնէր Վիլիթօր Հիւլօ եւ Ռաքէլ
թերթը: Պ. Բօլ Մօրիս կարգաց Վիլիթօր
Հիւլօի մի նամակն յորում մեծ բանաստեղ-
ծը օրինակած էր ինչ որ գրած էր 23 տա-
րի յառաջ Ժօրժ Սանտի համար, անուանե-
լով զնա լուսեղէն սիրտ, գեղեցիկ հոգի,
յառաջադիմութեան վեհանձն զինուոր, բոց
մը մեր ժամանակին մէջ: « Այս ամենքը կը
գրէի, կ'ըսէր աւարտելով, 1859-ն, 23 տարի
յառաջ, եւ ինչ որ կ'ըսէի Ժօրժ Սանտի նա-
խատուած ժամուն, կը կրկնեմ նաեւ նորա
փառաւորուած ժամուն: »

Այս ընթերցումն ընդունուեցաւ կեցցե
Վէլի'ն: Եւ ի երկարատեւ ազդակներով:

Բանախօսութեանց վերջինը կը պատկա-
նէր Պ. աը Լէսէբսի: Նա կարդացած էր
Ժօրժ Սանտ աշխարհիս ամեն երկրներու
մէջ եւ տակաւին նախընթաց պիչերը: Ի
պատիւ նմա, իւր տառը զաւակներէն միոյն
անունը Սոլանժ գրած էր: »

« Պ. Արսէն Հուսէյ ըսաւ թէ Ակադեմիան պէտք
« էր իւր ակթոններէն մէկը շնորհել Ժօրժ Սանտի:
« Եթէ կին մը Ակադեմիային մէջ մտնէր, տառը տար-
« ուան մէջ միայն կինը պիտի տեսնուէին, այլ
« եւս այրեր չպիտի ընդունուէին: »

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

ԹՈՒԱՆՇԱՆՔ

Մարդկային հնարիմացութեան յաղթա-
նակներէն մին է նաեւ այժմեան թուա-
գրութեան եղանակը, զոր ամէն քաղաքա-
կըրթեալ ազգեր կը գործածեն անխտիր, և
որ թէեւ շատ պարզ բան մը կը թուի ընդ-
հանրապէս, սակայն պատմութիւնը կ'ա-
ւանդէ մեզ թէ քանի՜ դարեր և քանի՜ հան-
ճարներ անբաւական եղած են այս պարզ
և հեշտ դրութիւնը գտնելու համար, և որ
Գտուէիլ զարմանք կը պատճառէ և կ'արժէ
որ այս մասին տեղեկութիւններ քաղելով
հաղորդենք մեր ընթերցողաց:

Մարդիկ միշտ թուարկութեան դադա-
փարն իրենց մատերուն վրայ ուսած են.
հնութիւնը կ'աւանդէ զայս մեզ իւր արձա-
նագրութեամբք, որոց մէջ կը տեսնուին թի-
ւերը կամ ուղղաձիգ կամ հորիզոնական
գծերով նշանագրեալ, ինչ որ ամենապարզ
կերպով անհատի մը ձեռաց մատներն հորի-
զոնական կամ ուղղաձիգ դիրքով կը ներկա-
յացնէ: արդի վայրենի ժողովուրդք, ինչպէս
նաեւ խուլ և համրերն եւս, միշտ մատներով
կը համրեն:

Սակայն մատներուն թիւը սահմանափակ
ըլլալով, մարդիկ մեծագոյն թիւեր համրե-
լու համար պարտաւորած են կրկնել, երեք-
նել այս առաջին տասնեակ թիւն մատնե-
րուն, և այս պատճառաւ է որ միշտ տաս-
նեակ զրութիւնն ամէն ժողովուրդոց մէջ
մուտ գտած է: Չափազէտք կը հաստատեն
թէ՝ եթէ մարդիկ ունէ ուրիշ հնգեակ, վեց-
եակ, և ըն. դրութեան մը հետեւէին՝ թը-
ուարկութիւնը և ամէն տեսակ թուաբա-
նական և ուսողական գործողութիւնք ան-
համեմատ աւելի դժուարութիւն պիտի
պատճառէին մարդոց: կարծես Նախախնա-
մութիւնը մարդոց ձեռաց տասն մատներ
տուած է որպէս զի տասնեակ դրութեան
հետեւին:

Վերեւ յիշեցինք թէ նախնիք ուղղաձիգ
կամ հորիզոնական գծերով կ'արտայայտէին
թիւերը: այս գծերը միայն հնագոյն և կամ
բոլորովին քաղաքակրթութենէ զուրկ մնացած
ժողովուրդոց արձանագրութեանց մէջ կը տես-
նուին, զի քանի՜ մարդիկ կը յառաջդիմեն
այնչափ աւելի մեծ թիւերու պէտք կ'ու-
նենան, և այս տեսակ գծերով հնարին չէ
նշանագրել հարիւրաւոր, հազարաւոր և ըն.
թիւեր, և արդարեւ մարդիկ հետզհետէ քա-
ղաքակրթութեամբ թիւեր նշանագրելու համար:

Բաբելացիք և Գաղղէացիք իրենց բեւե-
ռագրոց մէջ այսպէս կը նշանագրեն.

1	2	2	3	3	4	5	6
---	---	---	---	---	---	---	---

10	12	20	30	100	1000
----	----	----	----	-----	------

Նգիրտական հին նշանագրոց մէջ միութիւնը տասը, հարիւր, հազար, տասը հազար թիւերը հետեւեալ կերպով արձանագործուած են

1	10	100	1,000	10,000
---	----	-----	-------	--------

Ներայեցիք դործածեցին իրենց այբուբէնին ինն առաջին տառերն ինն առաջին թիւերուն տեղ, իսկ մնացեալ տասն երեք տառերն 10, 20, 30.....400 թուոց տեղ, 1,000 թիւ կը ներկայացնէին միութիւն ներկայացնող տառին վրայ երկու կէտեր դնելով:

Յոյներն եւս դործածեցին իրենց այբուբէնը, սակայն չեւո մը աւելցուցին տառերուն վրայ, որով թուանշանք ներկայացեալ են հետեւեալ կերպով

α'	β'	γ'	δ'	ε'	ς'	ζ'	η'	θ'	ι'
1	2	3	4	5	6	7	8	9	10

Այս տառերն յունական այբուբէնին առաջին տառերն են, միայն 6 թիւը բացառութիւն է, զոր հնագէտք Փիւնիկեան հրնադոյն այբուբէնի մը կը վերագրեն: Գաւով յաջորդ թիւերուն, Յոյներն կը տարբերին Ներայեցիներէն շարունակելով տառերու շարքը թիւերու շարքին հետ մինչեւ 19րդ թիւը, ինչպէս կը տեսնուի հետեւեալ շարքին մէջ

κ'	λ'	μ'		τ'
10	11	12		19

այնուհետեւ կ'սկսին բազադրել տառերը մեծադոյն թիւերու համար, այսպէս

κ	κ'	κ''	κγ'	
20	21	22	23	
λ	μ	ν	π	
50	40	50	90	

հարիւրաւորը են ρ, σ, τ, υ, φ, χ, ψ, ω, հազարաւորը են α, 1000
 β, 2000
 γ, 3000
 , 9000

Իսլով բիւրոց, Յոյներն կը նշանագրէին
 α, β, γ
 M, M, M, որք կը ցուցնեն 1,000, 20, 000, 30,000 եւն. այս դրութեամբ Յոյներն

մինչեւ 9999,9999 կրնային գրել. իրենց թուարկութիւնը աւելի հեռուն չէր երթար և սկզբան մեծադոյն թուոց պէտք չէին ունենար. Արքիմեդէս բարեփոխեց այս թուագրութեան ձեւն հետեւեալ տասնորդական ձեւն դործածելով:

α,	ι,	ρ,	α,	α,	ι,
1	10	100	1000	1,0000	100,000
		ρ,		α,	
		1,000,000		10,000,000	

Այս դրութեամբ ամենամեծ թիւերը կարելի էր նշանագրել:

Մեր նախահարք եւս երբ Հայկական տառերը դանուեցան՝ ամբողջ Մարտիկեան այբուբէնին իւրաքանչիւր տառին թուական արժէք մը տուին:

Առաջին ինն տառերը մէկէ սկսեալ մինչեւ ինն թիւ միաւորները կը ներկայացնեն: Յաջորդ ինն տառերը ինն տասնաւորները կը ներկայացնեն:

Սոցա յաջորդող ինն տառերը կը ներկայացնեն հարիւրաւորը:

Վերջին ինն տառերն հազարաւորները կը ցուցնէին (օ և Ֆ տառերը չէին դործածեր):

Հռովմայեցւոց թուագրութիւնը կը մերձենայ տասնեակ դրութեան, ինչպէս որ կը տեսնուի հետեւեալ ցուցակէն:

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XX
1	2	3	4	5	6	7	8	9	10	20

Տասնեակներորդ դարուն մէջ Պէրնըլիոս, աշակերտ Ժէրպէրի, կը հրատարակէր նոր դրութիւն մը, զոր իւր վարպետին տառերէն քաղած կը համարին: Պէրնըլիոս կը մերձեցնէր Հռովմայեցւոց թուագրութեան ձեւը մեր արդի թուագրութեան: Պէրնըլիոս միայն I X C M չորս տառերը կը դործածէր:

Այս տառերուն վրայ քաջուած հորիզոնական գիծ մը 1000 ուլ կը բազմապատկէր նոյն թիւը:

Պէտք հինգ դար առաջ ընդունած էր արդէն Հռովմական թուանշանաց այդ դրութիւնը և աւելցուցած էր ինն նոր նշանագրեր առաջին ինն թիւերուն համար որք են

1	τ	ϛ	ρ	ϙ	ϕ	λ	Λ	8
1	2	3	4	5	6	7	8	

9

9

Պէրնըլիոս իւր հրատարակութեան մէջ կը գործածէր նաեւ թուանշանները քիչ մը փոփոխելով, զորս կը նմանեցնէր յունական սպըւբէնին

17 2 8 9 10 11

8 10

Այս ամէն փոփոխութիւնք չէին գիտարացնէր թուագրութիւնը քանի, որ իւրաքանչիւր նշանագրոյ (ինչպէս արդի թուագրութեան մէջ) ըստ կարգի արժէք չէին տար և պարապ կարգերը զերօներով չէին լրացնէր:

Այս պատիւը վերապահուած էր Արաբացի թուագէտի մը, Մուհամմէտ Պէն Մուսա-է-Քարիզմի որ առաջին անգամ կը հրատարակէր այն պարզ և հեշտ դրութիւնը զոր այսօր կը գործածենք: Թէեւ Մուհամմէտ գրեթէ Պաշտի թուանշանները գործածած է, սակայն խնդրոյն կարեւորութիւնը ո՛չ թէ թուանշաններու ձեւին այլ գործածութեան եղանակին վրայ է:

Այս դրութեամբ միայն կարելի էր փոքրաթիւ նշանագրով ամենամեծ թիւերն, պարզ և զիւրմբունի կերպով ներկայացնել:

Է-Քարիզմի հետեւեցան ժամանակին գիտնականք որք հաշակեցին համայն աշխարհի այս թուագրական դրութիւնը, որ հազիւ 7 դար առաջ գտնուեցաւ: Ս. Տ.

Վ Ե Պ

ՄԱՏԼԷՆԻ ՄԵՂՔԸ

Բ.

(Երաւան-Բիւն Տեւ Թիւ 3731)

Յաջորդ օրէն սկսեալ, Բոպէր ամէն օր կուգար: Հօրեղբայրս ամենեւին չմտաբերեց փոքրիկ արգելք մ'իսկ յարուցանել այս

յարատեւ այցելութեանց մասին: Պէտք չէր որ այս երկու երչտասարդները զիրար լաւ ճանչէին իրարու հետ կապուելէ առաջ: Լուիզ ալ ամենեւին հոգ չէր ընէր որ ծածուկ պահէ Բոպէրի համար ունեցած համարանքը:

Օր ըստ օրէ, Բոպէր մեզ ամենուս սիրելի կ'ըլլար. մեզմէ իւրաքանչիւրն այդ եռանդուն և փափկասրտ բնաւորութեան ներքեւ էր: Բոպէր իւր կեանքը մեր կրակարանին քով կ'անցունէր: Հազիւ թէ առաւօտեան անդործ ժամերուն մէջ ակնարկ մը կուտար Փարիզի: Այն վայրկեանները միայն օգտակար կերպով գործածած կը համարէր, զորս Լուիզի եւ ինձ հետ անցուցած էր: Ընդհանրապէս իրիշուան դէմ կուգար, եւ հազիւ ներս մտած՝ անպատճառ կ'ուզէր մեզ պատմել առաւօտեան թափառումներն, եւ կ'ուզէր որ մենք ալ իրեն պատմենք առջի դիւերը մեր գլխէն անցածները: Նրբեմն դիւր մը կ'առնուինք եւ մեզմէ մին բարձր ձայնով կը կարգար. բայց շուտ մը անթիւ հարցումներ, խնդանքներ մեկդի դնել կուտային դիւրքը, եւ կ'անիծէինք այն այցելուներն որք կը խանգարէին մեր քաղցր ժամերը: Դեռ մինչեւ այսօր երբեք չեմ մոռնար այդ ժամերու յիշատակները: Շատ դառնութիւններ ունեցաւ կեանքս, բայց եւ այնպէս չեմ կարող անիծել այդ անցեալին քաղցրութիւնն: Նրբ գիւեր կ'ըլլար, կամ թատրոն կ'երթայինք, կամ նուագահանդէս, եւ եթէ դուրս չ'ենէինք, դաշնակի կը նստէի: Լուիզ եւ ես կ'երգէինք, հօրեղբայրս ալ իւր «Բիլ» կը շարունակէր: Ասոնք մեր ամէնէն քաղցրագոյն վայրկեաններն էին: Շատ անգամ պատահեցաւ որ երբ կ'երգէի, կը դիտէի թէ Բոպէրի աչքերն յիս չեշտուած էին տարօրինակ բացատրութեամբ մը. բայց այդ վայրկեաններն արագ անցնէին եւ սրտի խռովութիւնը զոր կ'ազդէին, երկար չէր տեւեր: Սակայն եւ այնպէս Բոպէր գովեստ չէր շուայր ինձ եւ հազիւ թէ կը խօսէր ձայնիս վրայ: Միայն թէ երբ օր մը իւր երեսին կուտայի թէ շատ պաղ կը շարժի Լուիզի երգած տառերը, ժպտեցաւ:

— Վասն զի, ըսաւ, երաժշտութիւնն ալ ինձ համար արուեստ մը չէ, այլ հոգեկան կիթ մը. դուն ալ, Մատէն, այդ կիթըն ունիս

Լուիզ մեր մօտն էր, Բոպէր ուրիշ բան չաւելցուց :

Կամաց կամաց ես ալ սկսայ սպասել Բոպէրի դալստեան այնքան անհամբերութեամբ որքան Լուիզ կ'սպասէր : Ամէն մարդէ առաջ ես կը ճանչէի անոր քալուածքն, եւ երբ կը մօտենար՝ առանց գիտնալու կը զգայի : Ի՞նչպէս կ'ըլլար որ այսքան յուզումներ, որք ինձ համար այնքան նոր էին, ամենեւին չվրդովեցին զիս : Ասիկա ես ալ չեմ գիտեր : Սիրոյ մէջ անփորձ ըլլալով, ամենեւին կասկած մը չունէի թէ ինչ էր այն զգացումն որ յիս բոյն դրած էր : Հարսանեաց պատրաստութիւնները լռելեայն կը տեսնուէին . Լուիզ շատ ուրախ էր :

Գիշեր մը Լուիզ եւ ես կը պատրաստուէինք թատրոն երթալ, բայց մեր ուրախութիւններով զբաղած՝ մեր արդուզարդը կամաց կամաց կ'ընէինք : Ժամանակը բաւական անցած էր, եւ մենք չէինք նշմարեր : Հօրեղբայրս լուր դրկեց թէ ժամանակը ուշ է եւ կ'սպասէ : Ես շուտ մը սենեակս փախայ եւ իսկոյն պատրաստուեցայ . բայց Լուիզ չէր կրնար այնքան շուտով պատրաստուիլ : Առաջարկեցի որ իրեն օգնեմ, բայց ինքն ուզեց որ իւր յատուկ սպասուհին զըրկեմ, եւ ինձ ըսաւ որ երթամ այդ պարոններուն համբերութիւն սովորեցնեմ :

Երգ մը երգելով սանդուղներէն վար իջայ եւ սպասուհին զրկեցաւ վերջ սրահը մըտայ . բայց զարմացայ որ լոյս չկար անդ եւ կարծեցի թէ հօրեղբայրս ու Բոպէր ջերմանողին մէջ էին ծխելու համար : Խարխափելով ներս մտայ եւ չմխնայեալ ռոքերըս կրակին երկնցուցի : Հաղիւ թէ կայնած էի, եւ ահա թեթեւ ձայն մը զիս սարսուցուց . կերպարանք մը, զոր չէի կարող որոշակի տեսնել, մութին մէջ կը շարժէր, մինչդեռ ձայն մը, որ այնքան ցած էր որ չէի կարող իմանալ, մրմնջեց .

— Մատչէն, սիրելի Մատչէն, պէտք է որ քեզ հետ խօսիմ, ալ ժամանակն է, գուցէ շատ ուշացայ :

— Ի՛նչ, դժուար ես, Բոպէր, գոչեցի երբ յանկարծական զարմացումս անցաւ . իրաւ որ երկիւղ պատճառեցի ինձ . ի՛նչ կ'ընես այս տեղ մութին մէջ դաւաճանի մը պէս :

— Քու վրադ կը մտածէի, ըսաւ ծանր ձայնով մը, եւ կը հաւատամ որ յիշաւի

Աստուած զքեզ հոս բերաւ : Երբ վայրկեան մ'առաջ տեսայ զքեզ որ դէպի ինձ կուգայի, իբր թէ համապատասխանէի իմ ձայնին որ դաղտնի կերպով զքեզ կը կոչէր, երբ ճանչցայ այդ յամրընթացիկ եւ շնորհալի քալուածքդ, այդ մեծ աչքերդ որք ինձ համար խաւարն իսկ կը փարատեն, ինքնին ըսի թէ խօսելու ժամն հասած է, եւ թէ այլ եւս պէտք է դադարի ու եւ է անըստուգութիւն : Եւ սակայն տես, Մատչէն, ի՛նչպէս կը դողդղամ . . . Ի՛նչ, ամենեւին կասկած մը չեմ ունեցած . եթէ տեղեակ ես դաղտնեացս, դժուար ինձ եւ ըսէ . չեմ հասկըցած, ի՛նչ, արդեօք իմ սիրտս չեմ կարողացած աչքերուս մէջ :

Ապշած էի, չէի համարձակեր հասկնալ :

— Ի՛նչ կ'ընես, մրմնջեցի . Լուիզ զքեզ կը սիրէ . . . դիտես զայդ . . . խեղդ ես, ի՛նչ ես . . . :

— Գուցէ, ըսաւ դաշն ձայնիւ, բայց պիտի չգթամ իմ խենդութեանս վրայ . ա՛հ, թէ գիտնայիր ո՛րչափ տառապեցայ երբ զգացի թէ այդ սէր ծնաւ յիս և կը մեծնար :

— Բոպէր, ըսի խիստ կերպով և ջանացի որ ձայնս չդողդղայ, զի սէրտս ուժգին կը բաբախէր, ալ բառ մը մի՛ աւելցնէր . ամեն մէկ խօսքդ թշնամանք մ'է ինձ համար . ի՛նչպէս կը համարձակիս դու ինձ հետ խօսիլ սիրոյ վրայ :

— Ներէ՛, մրմնջեց, դժբաղդ յիմար մ'եմ . դու ալ ըսիր . բայց կը յարդեմ զքեզ և կը պաշտեմ . մտիկ ըրէ՛ ինձ . . . կրնամ Լուիզի տալ սիրտ մը որ քեզի նուիրեալ է . Լուիզ դեռ տղայ մ'է : Մատչէ՛ն, տակաւին ազատ եմ, աղէկ մտածէ՛ . կը սէրեմ զքեզ բոլոր հոգւովս . . . :

— Կը բաւէ, ըսի զնա մէկդի հրելով, վասն զի գրեթէ ռոքերուս խոնարհած էր . չեմ ուզեր քեզ մտիկ ընել, վասն զի բոլոր այս ըսածդ մատնութիւն մ'է քրոջս համար և նախատինք մը՝ ինձ :

Շարժում մ'ըրի որ դուրս ելնէ :

— Ա՛հ, չեմ ուզեր մտիկ ընել ինձ, աղաղակեց :

Եւ երկու ձեռքերս բռնելով՝ ուժով սեղմեց իրեններուն մէջ :

— Անդու՞ր ես, Մատչէ՛ն, բայց դիտցիր որ իմ սէրս շուտ յուսահատող սէր չէ :

Պիտի ներեմ քեզ հակառակ քու կամացդ, և պիտի հարկադրեմ զքեզ սիրել զիս : Ո՛հ, զիս պիտի ծաղրես, զիտեմ քայց դու չես ճանչեր թէ ի՞նչ է կըրբը : Մատչէ՛ն, սէրը որոշել չգիտեր :

Մինչդեռ նա կը խօսէր, կ'զգայի թէ խռովեալ եմ և արդէն կէս մը յաղթահարեալ : Այս վայրկեան լոյս մ'երեւցաւ զրան վարագոյրներուն մէջէն, իմացանք թէ Նուիզ կուգար :

— Մատչէ՛ն, ըսաւ Բոպէր արագաբար, բառ մ'ալ, մէկ բառ մ'ալ : Ինչո՞ւ համար իմ սէրս թշնամանք պիտի համարիս քեզ, եթէ Նուիզ հաճութիւն տայ : Դուն ինձ ձգէ . . . :

— Աստուծոյ համար ըլլայ, լռէ՛, ըսի ահաբեկ :

Վարագոյրը վեր առնուեցաւ և Նուիզի գլուխն երեւցաւ :

— Ի՛նչ, հոգ քեք երկուքնիդ ալ մութին մէջ, ըսաւ անմեղութեամբ :

Յետոյ, առանց նշմարելու մեր խռովին,

— Հայրս կ'սպասէ, շուտ ընենք, ըսաւ :

Եւ Բոպէրի ձեռքէն բռնելով ուրախ զուարթ դուրս ելաւ :

Ես անոնց ետեւէն կ'երթայի աւելի յամբընթաց : Այդ վայրկեանին երջանիկ էի միայնութենէս, որով հնար կ'ըլլար ինձ կարմրութիւնս ծածկել : Իտալական թատրոնն անցուցած այս երեկոյնիս մեր ամէնէն տաժանելի երեկոյներէն մին եղաւ որչափ որ կը յիշեմ :

ԲՕԼ ԱԼՊԱՆ

(Շարունակելէ)

Ք Ա Ղ Ո Ի Ա Տ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ

18-24 ՕԳՈՍՏՈՍ

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Ֆրանքո-չինական պատերազմը կը շարունակուի : Շանկայիէն օգոստոս 28 թուով կը հեռագրեն թէ Քանթոնի փոխարքայն արտաքսեց Ֆրանսայի հիւպատոսն և Ֆրանսացի վաճառականներն : Մինի կամ Ֆու-Չէուի գետին եզերաց վրայ գտնուող բոլոր բերքերը քանդուեցան : չինական զօրքերն

որք զայնս կը պաշտպանէին ի միախուստ խուճապեցին : Ֆրանսական նաւատորմին դործողութիւններն ընդգէմ Ֆու-Չէուի՝ յառաջ տարուեցան և աւարտեցան փայլուն դերով : Այս դործողութեան մէջ Ֆրանսական նաւատորմն 10 մեռեալ և 41 վիրաւորեալ ունեցած է : Ի մօտոյ պիտի դրաւեն Քէլուեկի նաւահանգիստն և հանքերը :

— Ֆրանսական նաւատորմն օգոստոս 28 ին մեկնեցաւ Մին (Ֆու-Չէու) գետէն՝ ուրիշ կէտի մը վրայ երթալու համար : Ֆրանսական նաւատորմի մեկնումէն յետոյ, չինական զօրքերն աւարի տուէն և այրեցին օտարականաց թաղն որ Բակոտին (կուտուէն) մօտ կը գտնուի : Բէքինէն աննուած տեղեկու թեանց համեմատ, եւրոպական դեսպանները ծանուցեր են Չինական կառավարութեան թէ Ֆրանսայի հետ իւր կոռույն մէջ իրենց կողմէ միջնորդութիւն մը չյուսայ :

Պրիէր տը Լ'իլ զօրավարը Թոնքինի Փըրանսական զօրաց գլխաւոր հրամանատար անուանեցաւ Միլեօ զօրավարին տեղ :

Հոնկ Քոնկէն օգոստ 30 թուով կը հեռագրեն թէ Ֆրանսական բոլոր նաւերն հրաման ընդունեցան չինական նաւահանգիստներէն մեկնելու : Գանթօնի փոխարքայն Ֆրանսացւոց գլուխները բերողին վարձք խոստացաւ, այսինքն չինական հողին վրայ գտնուող Ֆրանսացիները ջարդելու հրաման տուաւ :

Շանկայիէն սեպտեմբ. 1 թուով հեռագիր մը գրոյց մը կը յիշատակէ թէ Բէ-Չէ-Լիի փոխարքայ Լի-Հունկ-Չանկ՝ որ Թիէն Չի-նի դաշնագիրն ստորագրած է, պաշտօնանկ և աստիճանազուրկ եղեր է : Կը կարծուի թէ Չինաստան բնակող բոլոր Ֆրանսացիներն արտաքսելու հրաման պիտի ելնէ ի մօտոյ :

— Չինական պատերազմը Ֆրանսայի մէջ սահմանադրական խնդիր մը յարուցած է որ բաւական փափուկ դիրքի մը մէջ կը թողու Պ. Ժիւլ Ֆէրրիի նախարարութիւնն : Հանրապետական Սահմանադրութեան 29-րդ հոլով համաձայն՝ Նախագահը չիլնար պատերազմ հրատարակել առանց կանխաւ երկուց ժողովոց հաւանութիւնն ստանալու : Բայց ահա Ֆրանսա Չինաստանի դէմ պատերազմ կը մղէ, առանց ի պաշտօնէ հաւանութիւն ստացած լինելու Մերակոյսէն և

Նրեանոյնանաց ժողովէն որք դեռ ի նիստ չեն հրաժարուած : Նախարարականաց եւ ընդդիմադիր կուսակցութեան, ինչպէս նաեւ երկու կուսակցութեանց թերթերու միջեւ ջերմ բանավիճակ չափուած է : Պ. ժ. Ֆէրրի կը վստահայ թէ արդի պայմանաց մէջ չինական պատերազմին վրայ վիճաբանութիւն մը ծայրայեղ և անբանական երեսփոխանաց առիթ պիտի ընծայէ այնպիսի անպիշտ խօսքեր ըսելու որոցմէ Զինացիք պիտի քաջալերուին :

— Տեղական մի քանի թերթեր Ղանտոնի թերթերէ առնելով կը հրատարակեն թէ՛ Ղորտ Նորթ պուրք իբրեւ « Բարձր Գովախէր » եւ թէ՛ Քէյփ Քէյփ յաղթողը՝ Ղորտ Ուոլտը իբրեւ ընդհանուր հրամանատար Եգիպտոսի մէջ գտնուող անգլիական և բնիկ զօրաց, օգոստ. 31ին Ղանտոնէ ձամբայ սիրտի ելնէին Գաշիրէ երթալու համար : Ղորտ Ուոլտը իբրեւ անուանումը գոհութիւն պատճառած է : Այժմ ապահով կը համարուի թէ Ղորտոն զօրավարը փրկելու համար ազդու ջանք մը պիտի լինի : Նեղոս գետին վրայ նաւարկութիւնը դիւրացած է մեծապէս, քանի որ ջուրերն հետզհետէ կը բարձրանան : Արեւմտի թէ լորտ Նորթ պուրք երկու ամիսէ աւելի չպիտի մնայ յԵգիպտոս : Խտիվն հրաման տուած է պատրաստել Բարձր Գովախէրին բնակութեան համար Գասրէ Նուսայի պալատն :

— Ռուսիոյ մէջ « Կեդրոնական Ասիոյ չոգենաւային ընկերութիւն » մը հաստատուցաւ 4 միլիոն ռուսկ յրամաց լիսով : Ընկերութիւնը Կասպից ծովու վրայ չոգենաւային ընկերութիւն, հազարավոր ընկերութիւն պիտի հաստատէ Կեդր. Ասիոյ հետ :

— Ճրանքօ՝ չինական պատերազմին առթիւ, ռուսական երեք զրահաւորք նաւային այժմեան մեծ մարզահանդիսից աւարտուածէն անմիջապէս յետոյ, ծայրայեղ Սիբերիա պիտի երթան, չինական ջուրերը գտնուող ռուսական նաւախուռքն ստորագրուելու :

— Պիլմաքը իշխանն որդեց դեսպան մը ղրկել ի Թէհրան : Սօփիայի ընդհանուր հիւպատոս Պ. Փոն Պրաուէշլայի, որ յայն պաշտօն կոչուած է, անպատեմբերի սիրով ճամբայ կընէ, ընկերակցութեամբ խորհրդականի մը, զինուորական կցորդի մ' և քարտուղարի մը :

— Բարիդի չինական դեսպանն օգոստ. 25ին Պեկին դնաց իւր պաշտօնեայնեանով : Ն. վստահութիւն չստ պատերազմաւոր ընդդիմութիւն մը կը ցուցնէ եղեր, հետեւաբար ի թերեւ կենէ այն զրոյց թէ չինական դեսպանն ի Բարիդ մնացած էր հաշտութեան բանակցութիւնները վերականգնող պաշտօնով :

— Փոլեքան երկիւղալի կերպիւ կը ծաւալի Խոտլիոյ մէջ և ընդհակառակն զգալի կերպիւ կը պալտի Ճրանքայէն : Վերջին շարժումն 6 օրերուն մէջ Խոտլիոյ զանազան քաղաքաց մէջ ամեն օր քուերայէ մեռնողներու թիւն է 50, 60, 60, 90 և 70 իսկ Մարսիլիոյ մէջ, 7, 11, 5, 5, 9, 5 և Թուլոնի մէջ 2, 1, 4, 3, 2, 1 : Խոտլիոյ թագաւորն անձամբ կայցելէ դժբաղդ վարակեալներն՝ անոնց սիրտ տալու համար : Այցեալ շաբթու Պուլքա փոքրիկ քաղաքն երթալով, այցելեց քուերայէ բռնուածներու հիւանդանոցն և մասնաւոր տուններն, ու 10,000 ֆրանկատ թողուց : Ն. վեհապետութեան կընկերանար նախարարապետ Պ. Տէրբէթիս : Սոմալիոյ Ալիքանթէ նաւահանգիստէն ալ քուերայի մէկ երկու դէպքեր կը ծանուցուին :

— Ռուսիոյ Պետական խորհրդոյ անդամ Հայազլի Կոմս Ղորտ Մեյքիթօֆ, Աթոքի խանի Բաղաբային խորհրդոյ խնդրանաց համեմատ, կայսերական հրամանագրով « Աթոքի խանի պատուական քաղաքացի » անունաւ նաւած է :

— Բապազ կը ծանուցանէ թէ Թուրքիոյ զանազան կողմերը Ռուսաց առեւտրական դործակալութիւններ պիտի հաստատուին, որոյէս զի Ռուս վաճառականը դիւրութիւն ունենան տեղեկանալու թէ ո՞ր քաղաքաց մէջ կրնան սպառել իրենց ապրանքները :

— Խորաւորաց ազդային ժողովն իւր ըստ ամենայնի խորաւորական ծայրայեղութեամբ զայլակցական տեսարան մը կ'ընծայէ, որ բնաւ պատիւ չբերեր խորհրդ արանական դրութեան : Տօրդ. Տավիտ Ագարսէիչ, արմատական կուսակցութեան պետն (նա որ Կայսեր հրամանագրով կարգ ացուած միջոցին, ոտնոյահ մնացած էր)՝ օգոստոս 28 ի նոտին մէջ ամբաստանեց մեծամասնութեան անդամները թէ հունդար կառավարութեան տորոհներն են, բայց խորաւոր ազդին բռնաւորներն, եւ իրենց վրէժն ընդդէմ իւր ժողովրդական դո-

հերը կը հալածեն ներքին կենաց մէջ իսկ : Մեծամասնութեան անդամ Պարոն Սմաթիէ, այս խօսքերէ գրգռեալ, դէպ ի Պ. Սդարսի քաղեց, սպառնական շարժում մ'ընելով : Կատաղի արմատականը զայս տեսնելուն պէս բռնցիկ զօրաւոր հարուած մը տըւաւ նորա փորին, յորմէ գետին ինկաւ և թաւալեցաւ Պարոն Սմաթիէ : 12 ոստիկաններ հարկ եղան՝ ժողովոյն բարաւանդաց աջակցութեամբ՝ զՊ. Սդարսի քաղեց ժողովատեղիէն դուրս հանելու համար, իսկ Պարոն Սմաթիէ ուրիշ սենեակ մը տարուելով, նախանական խնամքն ստացաւ : Անոթապէս Պ. Սդարսի քաղի կուսակիցք բողոքեցին թէ ժողովոյ նախագահն իւր իշխանութեան սահմաններէն դուրս ելած է : Ազմկից տեսարան : Նախագահն հրաժարական տուաւ, բայց մեծամասնութիւնը նպաստաւոր քուէ տուաւ նմա :

— Պեղծիոյ երեսփոխանաց ժողովն օգոստոս 23 ին ընդունեց կղերական նոր նախարարութեան բերած դպրոցական օրէնքը :

— Սեպտ. 1 ին (Ն. Տ.) տեղի ունեցաւ Կարմիր-Խաչի համագլխին ժողովոյ բացումը ի Ճիւղէվրա : Այս ընկերութեան պաշտօնն է պատերազմի ժամանակ վիրաւորեալ զինուորացի քարմանումն եւ վիրաւորեալներուն և հիւանդանոցներուն պաշտպանութիւնը : Խուռն բազմութիւն ներկայ էր ժողովոյ բացման : 21 հարցումներ առաջարկուեցան, ի մէջ այլոց պատերազմական դաշտերն ելեքորական միջոցաւ լուսավառելու խնդիրը : Ժողովը պիտի փակուի սեպտ. 7 ին :

Ն Ե Ր Ք Ի Ն

Մեծաւ գոհութեամբ կը հրատարակեմք թէ Օգոստ. Սուլթանը բարեհաճեցաւ Վէլդիրութեան աստիճան շնորհել կայսերական գանձուն Նախարար Վսեմ. Յակոբ փաշայի Գազալեան :

— Օգոստ. Սուլթանին գահակալութեան տարեդարձը չքեղ և փառաւոր կերպիւ տօնուեցաւ այս կիրակի զիշեր. բոլոր մայրաքաղաքն և արուարձանք, Վոսիորի երկու արիւնքները, և առ հասարակ բոլոր պաշտօնատուք և մեծամեծաց բնակարանք լուսալարդեալ էին և ժողովուրդն ուրախու-

թեան հանդէս կատարելով, բարեմաղթութիւններ կընէր Սուլթան Համիտ Բ. Կայսեր կենաց համար : Նախարարք և բարձրաստիճան պաշտօնատարք ցերեկին Երլորդի պալատը գնացին ի շնորհաւորութիւն : Փառաւոց մէջ ալ չքեղ հանդէսներ կատարուեցան :

Օգոստ. Սուլթանն այս առթիւ բարեհաճեցաւ ներումն շնորհել 47 այր և կին բանտարկելոց :

— Տիարպէքիրի և Մշոյ կառավարութիւնք այս օրերս զբաղեալ են կարեւոր խնդրով մը : Սիւլէյմանիէի կողմերէն հռչակաւոր Շէյխ մը՝ ինքզինք Մէհտի հրատարակելով հրաէք կարդացեր է՝ բոլոր Շէյխերուն որ իրեն հետ միանան իրենց մարդերովն : Տեղական իշխանութիւնք, երբ ուզեր են ձերբակալել այս անձն, անյայտ եղեր է :

— Բաղէչէն երկու վաչոյ զօրք և երկու թնդանօթ ճամբայ հանուեր են դէպ ի Մօտկան, որոց պաշտօնը պիտի լինի զսպել և հղատակեցնել ապստամբ քուրդ երն և վերաշինել նոցա այրած գորանոցն ու կառավարական պաշտօնատունն, որ այժմ չայդի մը վոխաղրեալ է, և նեղ ու անցուկ լինելուն համար գոհ չեն ո'չ իրենք և ո'չ տեղացիք :

— Դատական նախարարութիւնը չըջաբերականաւ պատուիրած է գաւառացի առական քննիչներուն որպէս զի անշաւուրջ հսկողութիւն ընեն հարցաքննիչ դատաւորաց իրենց պաշտօնին կիրառման վրայ. նոյնպէս չըջաբերականաւ մանրամասն տեղեկութիւն խնդրած է գաւառական բանտերու վրայ :

— Կայսերական կառավարութիւնն յանձնարարած է Օսմ. Պանշային 80,000 ոսկւոյ մանր դրամ կոխել տալ կայսերական Փողեքանոցին մէջ և չըջաբերութեան հանել :

— Ելեմաից պաշտօնատան մէջ աւանդաբար ի սահման դրուած 700 հազար ոսկւոյ գոնսոլիտէի մեծ մասն գողցուած լինելով, յատուկ յանձնաժողով մը կազմուած է դղերն երեւան հանելու համար :

— Վեհ. Սուլթանին հրամանաւ, Թուրքիոյ գլխաւոր գաւառաց մէջ ջրհանակրաց խումբերու հաստատութեան և կազմակերպութեան ծրագիր մը կը պատրաստուի :

— Օսմանեան կառավարութեան կողմէ Ռուսիոյ վճարելի պատերազմական տուգանաց յատկացեալ հասոյթը անբաւական լի-

ներով, Բ. Դուռն այս օրերս հրահանգ տը-
ուած է Գասթամուռնիի, Ատանայի, Հա-
լէպի, Գօնեայի և Սեբաստիոյ կուսակալու-
թեանց որպէս զի իրենց գաւառին ընդհա-
նուր հասոյթից կէսն յանձնեն Օսմ. կայսե-
րական Պանքային, պատերազմական տու-
գանաց յատկացուելու համար:

— Օգոստ. Սուլթանը բարեհաճեցաւ 50
օսմ. լիրա ընծայել Արմաւուտ գիւղի յու-
նաց օրիորդական վարժարանին, որոյ սա-
նուհիք իրենց ձեռագործաց ընտրեալոյնը
մատուցած էին Ն. Վեհափառութեան:

— Ելեւմտից պաշտօնատուներ 60,000
Օսմ. ոսկւոյ փոխառութիւն մը կնքած է
Օսմ. կայսերական Պանքային հետ:

Ա Ձ Դ Ա Յ Ի Ն

Ամեն. Ս. Պատրիարք Հօր առողջական
զիճակը թէ և մտահոգութիւն կը պատճա-
ռէր շարժուս սկիզբը, սակայն գոհութեամբ
կը ծանուցանեմք թէ վերջին երեք աւուրց
մէջ բարեւաւութեան ճամբուն մէջ մտած է:
Նրկու գիշերէ ի վեր հանգիստ կանցունէ Ն.
բարձր Սրբազնութիւնն. չորեքշաբթի Ս. Հա-
ղորդութիւն առաւ, և յաջորդ օրն այցելուներ
ընդունեց: Շաբթուս մէջ բժշկական խոր-
հըրդակցութիւնք կատարուեցան մի քանի
անգամ: Յունաց պատրիարքական տեղա-
պահն իւր կողմէ պատրիարքական փոխա-
նորդն և Գաբու Քէհնասի էֆէնտին զրկեց
ի տես Ն. Սրբազնութեան: Մայրաքաղաքիս
հայ եկեղեցեաց մէջ Հսկումներ կը կատար-
ուին վասն բարեւաւութեան Ն. Սրբազնու-
թեան և ժողովուրդը ժամէ ի ժամ կըսպասէ
առողջութեան ուրախալի լուրեր առնելու:

— Ազգային Վարչութեան խառն ժողովը
չորեքշաբթի աւուր շաբաթական նստին մէջ,
բաց յայլոց, հետեւեալ տնօրինութիւններն
ըրաւ: — Քաղաքական ժողովոյ ատենապետ
Վսեմ. Սիմոն պէյէն իմանալով որ՝ Կարնոյ
Առաջնորդ Օրմանեան Գեր. Ս. Մաղաքիա
Ծ. վարդապետի ի Կարին վերադարձին հա-
մար Բ. Դրնէն հրաման ելած և Ն. Գերա-
պատուութեան համար առ Վսեմ. Կուսա-
կալն Կարնոյ ուղղեալ Եպարքոսական յանձ-
նարարական հրամանագիր մը Պատրիարքա-
րան շրկուած է, որոշեց հրաւիրել զԳեր.

Օրմանեան և յանձնել հրամանագիրն և ա-
ւանդել պէտք եղած հրահանգներն: — Տես-
ներով Արզնկայի Առաջնորդ Գեր. Ս. Հմայ-
եակ եպիսկոպոսի հրաժարագիրն և հիւան-
դութիւնն հաստատող պաշտօնական դրերն,
պատշաճ չդատեց ընդունիլ հրաժարականը,
սակայն որոշեց արտօնութիւն տալ որ օդա-
փոխութեան համար ուղած տեղն երթայ,
առաջնորդական փոխանորդ մը կարգելով:
— Մերժեց նոյնպէս Ռոտտուրոյի առաջնորդ
Գեր. Ս. Ներսէս եպիսկոպոսի և Կինձ գա-
ւառի Առաջնորդական փոխանորդ Արժ. Ս.
Վահան վարդապետ Յակոբեանի հրաժարա-
կաններն: — Բաղէշի առաջնորդական տե-
ղապահ կարգեց Մովսէսեան Արժ. Ս. Մես-
րով վարդապետն, ըստ առաջարկութեան
տեղւոյն գաւառ. Վարչութեան: — Դա-
տաստանական Խորհրդոյ երեք հրաժարեալ
անդամոց տեղ ընտրեց Փանոսեան Գէորգ,
Ունձեան Միքայէլ և Զօպանեան Յակոբ է-
ֆէնտիններն:

— Կրօնական ժողովն առանձին նիստ ը-
ներով երկուշաբթի, հանրական խնդրովք
զբաղեցաւ և զլիաւորաբար հետեւեալ տը-
նօրինութիւններն ըրաւ: — Յանձնաժողով
մ'ընտրեց, եկեղեցականաց նիւթական վի-
ճակին բարեօրման պէտք եղած միջոցներն
որոշելու և տեղեկագրելու պաշտօնով: — Ո-
րոշեց վերստին բռնալ՝ երբեմն հաստատ-
եալ և սակաւ ժամանակէ յետոյ խափանեալ
կղերական ընծայարանն, ուր յատկապէս
ուսումն սիրտի առնուն կղերականութեան
փափագողներն և ուսման ցանկացող կղե-
րականք: Այս ընծայարանին համար ուս-
մանց ծրագիր մ'ալ պատրաստուած է: —
Տրապիզոնի վիճակին առաջնորդութեան հա-
մար ընտրելեաց եռանուն ցանկ մը պատ-
րաստեց խառն ժողովոյ ներկայելի. նշա-
նակեալ ընտրելիք են՝ Գեր. Ս. Մատթէոս
եպիսկ. Իզմիրլեան, Արժ. Ս. Տաճատ Ծ.
վարդապետ Ոսկանեան և Արժ. Ս. Իգնա-
տիոս Ծ. վարդապետ Շիշճեան: — Բաց
յաստի, առաջնորդական ընտրելեաց ցանկ
մը պատրաստեց, ընտրելիներն առաջին և
երկրորդ կարգերու բաժնելով:

— Բեղրսպուրի մեծահարուստ ազգա-
յին Աղա Մկրտիչ Սանասարեանց առաջար-
կած է Վանայ «Սանդխտեան» ընկերու-
թեան 10 հազար բուսլլի տալ, եթէ ընկե-

բութիւնն յանձն առնու փոխել դպրոցի առնուը և իւր հանգուցեալ մօր անունով կոչել զայն «Մարիամեան» վարժարան : Ընկերութեան Գործադիր Ժողովն հաւանած է և համաձայնութիւն կը գոյանայ ի մօտոյ : Նոյնպէս մտադրութիւն կայ առաջարկելու Պ. Սանատրեանին՝ որ «Սանդխտեան» վարժարանն ուղղակի իւր հսկողութեան ներքեւ առնու, վասն զի Սանդխտեան ընկերութիւնը կազմալուծեալ վիճակի մէջ է :

— Ազգիանուպօլսոյ Գաւառական ընդհանուր Ժողովն իւր անցեալ շարժումն նըստին մէջ ընդունած է գաւառին Առաջնորդ Գեր. Տ. Արիստակէս եպիսկոպոսի հրաժարականն :

— Հաճընոյ մէջ վերջերս տեղի ունեցած ամուսնական բռնաբարութեան դէպք մը այս շարժում ընդհանուր նուկանք և զայնոյթ պատճառած է ամեն կողմ : Նարկիզ անուն ուսեալ օրիորդ մը՝ որ 9 տարեկան եղած ժամանակ, Հայրապետ անուն անձի մը նշանուած էր, 15 տարեկան լինելով այժմ տարբեր ընտրութիւն մը կընէ և կը նշանուի իւր սիրած Անտարացի երիտասարդի մը հետ : Բայց Հաճընոյ չօրպաճիներն, ուղեւոր իրենց կամքը քալեցնել, առաջնորդութեամբ Բէքմզեան եպիսկոպոսի, օրիորդը բռնութեամբ կառնուն կը տանին քահանայի մը տունը ուր կը պահեն : Պատկէն յետոյ, հարսանեկան խուցին մէջ, լսեղծ աղջկին յուսահատ ճիգեր կընէ իւր բռնաւոր ամուսնոյն ձեռքէն ազատելու համար, չօրպաճիք և եպիսկոպոսն, որ դրան ետին կրպակէին, երկու երիտասարդ ներս կը խրկեն փեխին օգնութեան, և կէս ժամու կուէ յետոյ, Օր. Նարկիզ պարտեալ և նուաղեալ դուրս կելլէ խուցէն : պատառուն զգեստներուն վրայ արեան բիծեր կը նըմարուին : Կը լսենք թէ աղջկան հայրը Պոլիս պիտի գայ դատ բանալու :

ԾԻԱԽՈՏԻ ՇԱՀԱԿՑԱԿԱՆ ԲԷՃԻ

ԹՈՒՐԲԻՈՅ

Ա. Զ. Դ.

Բէժիի դէտերը վերջին օրերս բաական մեծ քանակութեամբ կեղծ պաշտ

բեւեր գրաւած են : Այս խաբարախուծեան հեղինակները ձերբակալուած և արգարութեան յանձնուած են :

Կենթագրութի ուրեմն թէ այս տեսակ բաղմամբի կեղծ պաշտներ վաւցուած են հին գործարանաց ծխախոտի տուփերու կամ ծրարներու վրայ :

Հետեաբար Բէժիի վարչութիւնը պարտք կը համարի իրեն ծանուցանել ծխախոտ վաճառող անձանց թէ՛ անմիջապէս պիտի գրաւէ այդ կեղծ պաշտները կրող տուփերը կամ ծրարները, և զայնս ունեցող անձերն ալ կանոնագրեալ պատժոց պիտի ենթարկուին :

ԸՆԴՀ. ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, 1884-Սեպտ. 1

The «Economic» Co-Operative Society Limited

«ԽՆԱՅՈՂԱԿԱՆ»

ԳՈՐԾԱԿԻՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(Ղալաթիա, Վոյվոտա վողոց, Օսմ. կայս. Պանքային դիմաց)

Տնօրէն Ժողովոյ օգոստ. 3 ի նստին մէջ որոշուեցաւ սահմանափակ թուով անդամներ ընդունիլ ընկերութեան միջերանոցները. տամի մը դին որոշուեցաւ տարեկան մէկ մէճիսիյէ տմսոյս 15 էն սկսեալ. տամ ունեցողն իրաւունք պիտի ունենայ ընկերութեան միջերանոցէն ամեն ինչ գնել նոյն նպաստաւոր գներով որով կը գնեն նոյն իսկ բաժնեակեր անդամք :

Օգոստոս 15էն յետոյ ընկերութեան Մատակարարին գիմելով կարելի է ըստանալ տոմսեր և դնոց ցուցակներ :

Ղալաթիա, 5 սեպտեմբեր 1884

1-9

Սրտօնատէր

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻԲ ԼՐԱԳՐՈՅ